Azg Ազգ

25 ՕԳՈՍՏՈՍ 2012 ՇԱԲԱԹ 146(4998)

ISSN: 1829-1651

«Քերֆն ամբողջությամբ մթերվելու է»

Հավաստիացրեց գյուղնախարար Սերգո Կարապետյանը

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գյուղատնտեսության նախարար **Սերգո Կարապետյանը** «Նովոստի» գործակալության մամուլի ակումբում երեկ անդրադարձավ գյուղատնտեսությունում 7 ամսվա ընթացքում արձանագրված արդյունքներին, առանձնացնելով մթերումների կազմակերպման խնդիրը: Նա նշեց, որ նախարարության ամբողջ ուշադրությունը բեռնված է բերքի իրացման՝ մթերման խնդրին, եւ կարելի է ասել, որ հաջողվում է լուծել: Չնայած որոշ ձեռնարկություններ չեն աշխատում եւ կան դժվարություններ, բայց դա, ըստ նախարարի, չի խանգարում մթերման աշխատանքներին:



Սերգո Կարապետյանը տեղեկացրեց, որ այս տարվա հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 290,5 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 10,2 տոկոսով: Աճ են ունեցել ե՛ւ բուսաբուծությունը՝ 20 տոկոսով, ե՛ւ անասնապահությունը՝ 2 տոկոսով: Գյուղնախարարի ներկայացմամբ, համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) գյուղատնտեսության բաժինը 2005-ից նվազել է, եւ այս միտումը շարունակվել է մինչեւ 2010 թ., երբ գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ում կազմեց 17 տոկոս: Սակայն 2011-ից, «գյուղատնտեսության ոլորտի տնտեսվարողների ջանքերով եւ պետական աջակցության ծրագրերի արդյունքում», այդ ցուցանիշը փոխվեց եւ կազմեց ՀՆԱ-ի ավելի քան 20 տոկոսը: Սերգո Կարապետյանը վստահություն հայտնեց, որ այս միտումը մինչեւ տարեվերջ կշարունակվի:

Տես էջ 2

ԱՄՆ-ը եւ Թուրքիան քննարկել են Ասադի տապալման պայմանները

Նոր բախումներ Տրիպոլիում

Թուրքիայի եւ ԱՄՆ-ի պաշտոնական ներկայացուցիչները Անկարայում անցկացրել են «օպերատիվ պլանավորման խմբի» առաջին նիստը, որի նպատակը Սիրիայի նախագահ Բաշար Ասադի շուտափույթ տապալմանը նպաստող պայմանների ստեղծումն է:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ հանդիպումն անցկացվել էր փոխարտգործնախարար Խալիթ Ջեւրիկի եւ Անկարայում ԱՄՆ դեսպան Էլիզաբեթ Ջոնսի համանախագահությամբ: Խմբի կազմում ընդգրկված են նաեւ երկու երկրների պաշտպանական եւ հետախուզական գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Կողմերը քննարկել են Սիրիայի վարչակարգի փլուզման եղանակները, ինչպես նաեւ իրադարձությունների նման զարգացման հնարավոր հետեւանքները, մասնավորապես՝ քիմիական զենքի տարածման վտանգը:

Խմբի ստեղծման նախաձեռնությամբ հանդես էին եկել երկու երկրների արտգործնախարարները՝ Հիլարի Քլինթոնի օրերս Թուրքիա կատարած այցելության ժամանակ: Մասնավորապես որոշվել էր, որ խմբի գոյությունը կօգնի խուսափել Սիրիայի իրադարձությունների՝ Թուրքիայի եւ ԱՄՆ-ի համար անցանկալի ընթացքից:

Թուրքիայում արդեն գործում է սիրիացի ապստամբների օգնության կենտրոն, որը կազմակերպվել է Անկարայի, Վաշինգտոնի եւ Պարսից ծոցի արաբական մի շարք երկրների համատեղ ջանքերով: Ռոյթեր գործակալության տվյալներով, այդ հաստատությունը գործում է Ադանա քաղաքում: Բացի դրանից, սիրիացի ապստամբներին արդեն համերաշխություն են հայտնել Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան:

Միաժամանակ հաղորդվում է, որ Սիրիայի դեմքերի պատճառով շարունակվում են բախումները Լիբանանի Տրիպոլի քաղաքում, որտեղ հակամարտ կողմերն են սուննիները եւ ալավիները: Օգոստոսի 24-ին հերթական բախումների ժամանակ սպանվել է սուննի աստվածաբան Շեյխ Խալիդ ալ-Բարադեյը: Տրիպոլիում երկու համայնքների թաղամասերը բաժանված են Սիրիայի փողոցով: BBC-ի տվյալներով, հակամարտ կողմերը օգտագործում են թեթեւ հրազեն եւ նռնականետներ: Քաղաքում հրդեհներ են սկսվել:

Լիբանանի կառավարությունը կարգուկանոնը վերահաստատելու նպատակով Տրիպոլի է ուղարկել մի քանի հարյուր զինվոր եւ զրահատեխնիկա: Վարչապետ, դավանանքով սուննի Նաժիբ Միկատին Տրիպոլիի բնակիչներին կոչ է արել չենթարկվել սանդրանքներին, որոնց նպատակը միջհամայնքային երկպառակության խորացումն է: Լիբանանում սուննիները պաշտպանում են սիրիական ընդդիմությանը, իսկ ալավիները՝ Բաշար Ասադի վարչակարգին:

Լոնդոնում արաբերեն լույս տեսնող «Աշ Շարք ալ Աուսաթ» թերթը հաղորդում է, որ օրերս հիմնվել է «Լիբանանի սուննիների ռազմական խորհուրդ», որը կոչված է միավորելու Տրիպոլիի սուննի զինված ջոկատները:

Քրեական պատասխանատվություն ազգամիջյան բախումներ հրահրելու համար

Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների եւ տեղական վարչակազմերի ղեկավարները քրեական պատասխանատվության կենթարկվեն այն գործողությունների համար, որոնք ազգամիջյան բախումներ են հրահրում, տեղեկացնում է «Արմենպրեսս»-ը: Համապատասխան օրենքը, ինչպես «Մոսկովսկիե նովոստի»-ին պատմել է «Եդինայա Ռոսիա»-ից պատգամավոր, Ռուսաստանի ժողովուրդների ասամբլեայի խորհրդի նախագահ Ռամազան Աբդուլատիպովը, Պետդումայի քննարկմանը կներկայացվի 2012 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին:

Աբդուլատիպովն օրինագծի հեղինակներից մեկն է: Նրա կարծիքով՝ հարկավոր է պատասխանատվության ենթարկել այն պաշտոնյաներին, որոնք ազգամիջյան բախումներ են հրահրում կամ ժամանակին չեն հակազդում դրանց: Բացի դաշնության սուբյեկտների եւ տեղական վարչակազմերի ղեկավարներից, Աբդուլատիպովը ցանկանում է ազգայնական արտահայտությունների համար պատժել ձեռնարկությունների, դպրոցների եւ բուհերի տնօրեններին:

Օրինագծի մշակման համար առիթ են դարձել Հյուսիսային Կովկասից եկվորների մասին Կրասնոդարի երկրամասի նահանգապետ Ալեքսանդր Տկաչովի վերջերս արած հայտարարությունները, ինչպես նաեւ այլ տարածաշրջանների ղեկավարների պահվածքը:

«Օգնության ձեռք հալեպահայերին»

Այդ ձեռքը Թուրքիայի արտգործնախարարության թույլտվությամբ մեկնում է Կ. Պոլսո հայոց պատրիարքարանը:

Այդ մասին երեկվա համարում գրել է «Սաբահը»: Վերնագիրը վերցրել ենք թուրքական թերթից: Ահա թե ինչ է ասում. «Սիրիայում ծավալվող քաղաքացիական պատերազմի հետեւանքով շուրջ 100 հազար փախստական ապաստանել է Թուրքիայում, որտեղից օգնության ձեռք են մեկնում Սիրիայի հայերին: Թուրքիո հայոց պատրիարքարանի կրոնական ժողովի ատենապետ, **Թաթուլ Վարդապետ Անուշյանն** ասաց, որ անցյալ շաբաթ հեռաձայնել է Սիրիայի հայ համայնքի առաջնորդներին եւ աջակցելու պատրաստակամություն հայտնել այս երկրի հայերին, որտեղ գործում են Հալեպի եւ Դամասկոսի առաջնորդարանները: Հիշեցնելով սիրահայերին Թուրքիայում հյուրընկալելու արտգործնախարար Դավութօղլուի պատրաստակամության մասին՝ հայ հոգեւորականը շարունակեց. «Ես հեռաձայնեցի նրանց: Ասացի, որ պատրաստ ենք ցուցաբերել ամեն օգնություն, իսկ ցանկության դեպքում՝ նրանք կարող են գալ Թուրքիա: Սիրով կընդունենք»: Ըստ Անուշյանի՝ Սիրիայում հայերի թիվը շուրջ 100 հազար է, նրանք գլխավորապես բնակվում են Դամասկոսում, Հալեպում, Քեսաբում եւ Ղամշլիում:

Պատերազմի առաջին իսկ օրից չեզոքություն պահպանող հայերը կռիվների թեժացման հետ որոշեցին գաղթել Հայաստան, մտավախությամբ, որ իրենք հրիսոնյա են, ուստի երկրում արմատականների հնարավոր իշխանությունը կվտանգի իրենց կյանքը: ՀՀ սփյուռքի նախարարության տվյալներով՝ այս տարվա մարտից Երեւան է ժամանել սիրիացի 3 հազար հայ: Նրանցից **Ենոք Սալուխյանն** ասաց հետեւյալը. «Ձեռքերը չէին լռում նույնիսկ գիշերով: Կառավարությունը անընդհատ զգուշացնում էր մեզ, որ տնից դուրս չգանք»: Ի դեպ, Սիրիայում բնակվող հայերի ճնշող մեծամասնությունը 1915-ի իրադարձությունների հետեւանքով Օսմանյան կայսրության սահմանները լքածների սերունդներն են»:

Հ. Ջ.

Եվրոպայի ամենաթանկ հուշարձանները

Իտալիայի Մոնցաէ Բրիանցա մարզի առեւտրաարդյունաբերական պալատի մասնագետները կազմել են Եվրոպայի երկրներում գտնվող ամենաթանկ ճարտարապետական հուշարձանների ցանկը:

Առաջին տեղում Փարիզի խորհրդանիշը դարձած էյֆելյան աշտարակն է, որի արժեքը գնահատվել է 435 մլրդ եվրո: «Թելեգրաֆ» թերթը հաղորդում է, որ երկրորդ տեղում հայտնվել է Հին Հռոմի հրաբխիներից մեկը՝ Կոլիզեումը, որը գնահատվել է 91 մլրդ եվրո: Երրորդ տեղը զբաղեցնում է Սուրբ Ընտանիքի տաճարը (Բարսելոն)՝ 89 մլրդ եվրո: Չորրորդ տեղում Միլանի տաճարն է (83 միլիարդ): Հինգերորդը լոնդոնյան Թաուերն է (71 միլիարդ), վեցերորդը՝ Մադրիդում գտնվող Պրադո թանգարանը (58 միլիարդ): Թանկարժեք հրաբխիների յոթնյակում վերջինը Սթոունհենջն է (Անգլիա), որը գնահատվել է 11 մլրդ եվրո:

Պ. Ք.

Իլհամ Ալիեւը հիվանդ է

«Նորին գերազանցություն»-ը վերջին անգամ հանրությանը ներկայացել է Բաքվի Թոֆիգ Բայրամովի անվան «հիմնովին արդիականացված ստադիոնի» կարմիր ժապավենը կտրելու առիթով: Մինչ այդ Իլհամ Ալիեւը մեկնել էր Լոնդոն եւ մասնակցել օլիմպիական խաղերի բացման կապակցությամբ Եղիսաբեթ 2-րդ թագուհու ընդունելությանը: Մի քանի օր անց, սակայն, նա ընտանյոք հանդերձ դարձյալ ուղեւորվել էր «մառախլապատ Ալբիոն»: Դա բավական արտառոց քայլ էր: Ադրբեջանական մամուլը գրեց, որ «նախագահը Լոնդոն է մեկնել՝ ոգեւորելու օլիմպիական մարզիկներին»: Մինչ այդ որակազրկվել էին ադրբեջանցի մի բռնցքամարտիկ, մրցամարտի թուրմեն դատավորը եւ սիրողական բռնցքամարտի ադրբեջանական ֆեդերացիայի փոխնախագահը, որը միաժամանակ իշխող կուսակցությունից խորհրդարանի պատգամավոր է: Միջազգային մամուլը գրել էր, որ Ադրբեջանի ԱԻ նախարար Քյամալեդդին Հեյդարովը 9 մլն դոլարի «նվիրատվություն է արել» օլիմպիական բռնցքամարտի կազմակերպիչներին, ինչի դիմաց ադրբեջանցի մարզիկները «պետք է շահեին 2 ոսկե մեդալ»:

Իլհամ Ալիեւը Լոնդոնում էր, երբ ադրբեջանցիները ոսկե մեդալ «նվաճեցին»: Ճիշտ է՝ ըմբշամարտի գծով, բայց օլիմպիական ոսկին ամեն դեպքում կարեւորվեց նրանով, որ Լոնդոնում Ադրբեջանի օրհներգը հնչեց: Հարց է առաջանում՝ Իլհամ Ալիեւը չէ՞ր կարող Բաքվից կարգավորել ոսկե մեդալի հետ կապված հարցերը, հնարավո՞ր չէր Լոնդոն գործուղել մի ավելի ցածրաստիճան պաշտոնյայի, որի ներկայությունը կասկածներ չէր հարուցի, թե Ադրբեջանը «կաշառել է օլիմպիադայի մրցավարներին»: Նախագահի պաշտոն զբաղեցնողն այնքան հիմար չէ, որպեսզի այդ կարգի նրբությունները հաշվի չառնի: Աչք է ծակում մանավանդ հանգամանքը, որ նրա հետ Լոնդոնում էին կինը, դուստրը եւ որդին: Թվում է՝ «մարզիկներին ոգեւորելու համար» տրիբունայում կնոջը եւ աղջիկներին, որոնք, ի դեպ, ամուսնացած են եւ մանկահասակ երեխաներ ունեն, ժամերով կանգնեցնելու եւ ըմբշամարտի տեսարաններ դիտել տալու կարիք չկար է լիներ. «Նորին գերազանցության» երկար հասակը բավական էր, որպեսզի ադրբեջանցի «փահլեւանները զգեստներին» մրցակիցներին:

Տես էջ 8

ԱԶԳ

Մթացիկ

Սոցիալական ցանցերը մի շարք կարեւոր խնդիրներ են լուծում: Հատկապես դրական է, որ դրանք շատ արագ օգտատերերին են հասցնում այն ինֆորմացիան, որը ոչ մի ուրիշ աղբյուրից հնարավոր չէ քաղել: Սակայն, ի թիվս մի շարք հարմարությունների եւ անհարմարությունների, սա մի տարածք է, որտեղ կեղծել հնարավոր չէ, եւ կեղծիքը երեւում է հազար կիլոմետրերից: Ու ոստվելով սոցիալական ցանցերում՝ կարելի է իսկապես հասկանալ՝ ո՞վ ինչ է մտածում եւ ո՞վ ինչի է ընդունակ :

Մի կողմ թողնելով այդ ցանցերի՝ կենցաղային մակարդակի կոչունությունն ու շատ հաճախ էթիկայի տարական կանոնների չպահպանումը, նաեւ՝ պարզապես ժամերով ժամավաճառությունը շատ օգտատերերի պարագայում, նշենք, որ այս ցանցերը հիմա ավելի կարեւոր ասպարեզ են մեր քաղաքական գործիչների ու ընդհանրապես հանրային մարդկանց համար, որոնց հետ կարելի է բանավիճել, ոչ պաշտոնական ու այդ առումով իրականությանն ավելի մոտ նրանց գնահատականն ընթերցել, արձագանքել, հարցնել ու պատասխան ստանալ, մի խոսքով՝ անփողկաց հարաբերվել: Բնականաբար այդ ցանցերում գրանցված են այն քաղաքական գործիչներն ու հանրային մարդիկ, ովքեր չեն վախենում հասարակության հետ հարաբերվել:

Երեկ ոստվելով սոցիալական ցանցերում, սակայն, տեսանք, որ սովորաբար ակտիվ գործիչների մի մասը վերջին օրերին այնքան էլ ակտիվ չէ՝ նշանակություն ունի ամառային վերջին օրերի արձակուրդային ռիթմը երեւի: Օրինակ՝ **Վարդան Օսկանյանը**, որ սովորաբար անընդհատ քաղաքական գնահատականներ էր դնում Facebook-ի իր էջում, երեկ գովազդում էր Սիվիլնետի հեռուստառեպորտաժներից մեկը, կամ ՀՀԿ-ական **Արտակ Զաքարյանն** անձամբ գրառումներ իր էջում վերջին օրերին չէր արել: Բայց վերջինիս էջը պարապ չէր մնացել նորություններից, եւ ահա թե ի՞նչ էր դրել օգտատերերից մեկը՝ **Կարեն Թումանյանն** այնտեղ. «Դիմում եմ որոշ պատգամավորների՝ ձեզ հարցրե՞լ եք, թե ինչո՞ւ ժողովրդի նույնիսկ անապահով հատվածը, այս մարդու անունը լսելուց, իրեն պատշտպանված էր զգում (խոսքը խոսքը նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի մասին է-Մ.Խ), իսկ ձեզ հետ շփվելիս անմիջապես պատշտպանվելու ցանկություն է ի հայտ գալիս. պատասխանը հետեւյալն է՝ կառուցում եք դղյակներ, ապրում եք, ինչպես ասվածներ, պատշտում եք ճոխությունը, ոչ մի բանով ձեզ չեք սահմանափակում, չքավորներից խուսափում եք, ինչպես բորոտներից, հասարակությունը բաժանել եք կայացածների եւ չկայացածների եւ այսպես շարունակ... Ինչպես ասուլիս տալ»: Վստահ եղեք՝ նրա հետ անհամաձայն բանավիճողներ եղել էին:

ՀՅԴ Հայաստանի Հայ դատի գրասենյակի տնօրեն **Կիրո Մանոյանը**, պարզվում է, բավական ռոմանտիկ մարդ է, եւ իր էջի վերջին գրառումը «Լեռներ Հայրենի» բանաստեղծությունն է՝ «Էրգրից» նկարով եւ «Արտահանէն Արդուին ճամբու ընթացքին (11 Օգոստոս 2012)» պարզաբանմամբ.

Ախ, ինչքա՜ն, ինչքա՜ն կարոտել եմ ձեզ,

Սիգապանծ լեռներ հայոց աշխարհի,

Վազել եմ, յոգնել ձեր լանջերում ես,

Իմ լեռնե՛ր, լեռնե՛ր, լեռնե՛ր հայրենի: Եվ այլն:

Քաղաքապետ **Տարոն Մարգարյանի** էջում **Գոհար Սահակյան** անվամբ մի տիկին գրառել է. «Հարգելի քաղաքապետ, Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքի Մինաս Ավետիսյան 4 փողոցի 2 շենքին հարող մայթը, որը նախատեսված է հեծիոնցի համար, արդեն 2 տարուց ավելի զավթվել է բնակիչների կողմից եւ այժմ ծառայում է որպես հանգստի գոտի 2- 3 բնակիչների համար , որտեղ արդեն խորովածնոց են բացել... Կարճ ասած, տարածքի բնակիչները մայթից չեն կարողանում օգտվել ապօրինի մայթ զավթողների պատճառով... Իսկ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի աշխատակիցները ոչ մի միջոց չեն ձեռնարկում այդ ապօրինությանը վերջ տալու համար... Ինչ է ստացվում՝ մայթերը եւս պետք է «սեփականաշնորհվեն»: Սա՝ ի թիվս տարբեր իրազեկումների ու շնորհակալությունների, որով լի է քաղաքաթեւի էջը:

Ինչպես տեսնում եք՝ Facebook-ում շրջելիս նախ չեք տխրի, կիրազեկվեք, հետո կիմանաք, թե ինչ են մտածում ամեն օր էկրանից ձեզ երեւացող հայտնի մարդիկ ու գուցե պաշտոնյաների էջերում ինֆորմացիա տեղադրելով՝ կարողանաք հարց լուծել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հանրային մարդկանց գրառումները

http://blognews.am/arm/news/17972/haxtanakin-khajordi-partutyunete.html: Կարծես թե շատ բան է ասել օգտատեր Կարեն Թումանյանը՝ այս գրառումը կամ ստատուսը տեղադրելով Արտակ Զաքարյանի էջին:

Գրող, հրապարակախոս **Արծրուն Պեպանյանի** վերջին գրառումներից վերցրինք երկու կարճը. «Այս ստատուսը արդեն քանի օր պտտվում է մտքիս մեջ, բայց դե անհարմար էի զգում գրել: Բայց այն, ինչ տեսա այսօր առավոտյան, ջնջեց անհարմարության զգացողություններս. «Փողոցում կանանց քայլվածքից կարելի է ենթադրել, թե ի՞նչ երկրում ես դու գտնվում» (՞-Մ.Խ.): Մյուս գրառումը. «Ընկերներիցս մեկը նոր գրեց, թե մի շնչում կարդացել է իմ «Պապ թագավոր կամ մայրամուտից առաջ» վեպը: Խիստ նեղացա: Ասացի՝ «Երկու տարի չարչարվում, գրում ենք, բռնում-մի շնչում կարդում եք: Գոնե մի քանի օր գիրքը շուռումուռ տվեք»: Հա, սա գրողական սովորական զգացում է, ուրիշ գրողներից էլ եմ լսել այս կարգի բան:

«Ժառանգության» նախկին պատգամավոր **Սյոնոպա Սաֆարյանը**, որ ամենից ակտիվ ստատուսագիրներից է, եւ ամեն օր տարբեր իրողությունների վերաբերյալ մի շարք գրառումներ է դնում իր էջում, երեկվա գրառումներում մեկնաբանել էր թերթերից մեկին ԱԺ փոխնախագահ **Էդուարդ Շարմազանովի** խոսքը. «ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի արձագանքը Դավութօղլուին. Ահմեդ, բռնվի, գծերից գցելու ենք», ուրախացել էր Ս. Սաֆարյանը: Նրա կուսընկերուհի **Անահիտ Բախչյանի** էջից մեզ դուր եկավ տիկին Անահիտի սիրելի ցիտատը. «Ցոլանավորելով ժամանակդ՝ պլանավորում ես անհաջողությունդ»:

«Կենտրոն» հեռուստաընկերության մեկնաբան **Պետրոս Ղազարյանը** օգոստոսի 23-ին, անկախության հռչակագրի օրը գրառել է. «Ինձ թվում է՝ մենք այն ժամանակ լիարժեք անկախ կլինենք, երբ Հայրիկյանը կդադարի այս օրը ասուլիս տալ»: Վստահ եղեք՝ նրա հետ անհամաձայն բանավիճողներ եղել էին:

«Քերֆն ամբողջությամբ մթերվելու է»

1-ին էջից

Խոսելով 7 ամիսների այլ ցուցանիշների մասին՝ գյուղնախարարը տեղեկացրեց, որ եթե արտահանման ընդհանուր ծավալն ավելացել է 13,5 տոկոսով, ապա գյուղատնտեսական ծագման արտադրանքինը՝ 55,7 տոկոսով: Արտահանված արտադրանքի մեջ գյուղատնտեսական ծագման ապրանքների տեսակարար կշիռը այս տարվա առաջին կիսամյակում կազմել է 19,1 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 13,9 տոկոսի փոխարեն: Առավել մանրամասն անդրադառնալով մթերումներին՝ Սերգո Կարապետյանն ասաց, որ մթերումների ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են շուրջ 18 տոկոսով, ընդ որում, պտղի մթերումը՝ 2,1 անգամ, իսկ մասնավորապես ծիրանինը՝ 3,5 անգամ: Մթերման գները նույնպես բարձր են եղել. դեղձը՝ 50-60 դրամ, ծիրանը՝ 40-50 դրամ, լոլիկը՝ 60 դրամ եւ այլն: Նախարարը չբացառեց, որ հնարավոր է կուսակումներ լինեն, սակայն բերքը ամբողջությամբ մթերվելու է: Նրա տեղեկացմամբ՝ այսօր Արարատյան դաշտի բերքն ակտիվորեն մթերում են Արտաշատի պահածոների գործարանը, ՄԱՊ-ը, «Լեւոն» ՍՊԸ-ն, սկսել է նաեւ «Բորոդինոն»: Սերգո Կարապետյանն ասաց, որ թեեւ պետությունը լծակներ չունի ազդելու մթերողների վրա, բայց օգտագործելով անձնական կապերը եւ անգամ սիրելով՝ ինքը բանակցում է մասնավոր գործարանների տերերի հետ, որ մթերումներն իրականացվեն:

Նոյեմբերյանի դեղձի մասին տրված հարցին գյուղնախարարը պատասխանեց, որ վաղահաս դեղձն այդտեղ ամբողջությամբ մթերվել է, սկսվել է միջահաս դեղձի մթերումը: Նա բացառեց գյուղացիների կողմից բերքը թափելու հնարավորությունը, ասելով, որ գուցե դժգոհեն եւ ինչ-որ քայլեր անեն, բայց ոչ ոք իր բերքը չի թափի:

Ինչ վերաբերում է գյուղմթերքների շուկայական գներին, ապա այս տարվա առաջ բերքի շնորհիվ դրանք նվազել են: Մրգերի գները հուլիսին կազմել են անցյալ տարվա հուլիսի գների 79 տոկոսը, խնձորինը՝ 47,8 տոկոսը, դեղձինը՝ 67,2 տոկոսը, ծիրանինը՝ 56 տոկոսը, բալինը՝ 44 տոկոսը եւ այլն:

Նախարարը կարեւոր է համարում գյուղատնտեսական շուկաների բացումը Երեւանում, ասելով, որ այդտեղ վերավաճառողներ չկան՝ գյուղացիներն ու քաղաքացիները առանց միջնորդի բերքի առուվաճառք են անում:

Գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ տրված հարցի մասին էլ Սերգո Կարապետյանն ասաց, որ առաջիկայում դա մեզ մոտ չի կարող լինել, քանի որ բավականին բարդ գործընթաց է, բայց որոշ քայլեր այդ ուղղությամբ արվում են:

Առաջիկա տարում գյուղատնտեսության համար գերակա խնդիր է լինելու կոոպերացիաների ստեղծումը: Այս տարի ստեղծվել են 39 նման կոոպերացիաներ անասնապահության ոլորտում, նախատեսվում է ստեղծել եւս 20-ը:

Միաժամանակ, կշարունակվեն պետական աջակցության ծրագրերը ոլորտին: Դրանք են սերմացուի մատակարարումը, վառելիքի, պարարտանյութի եւ գյուղատնտեսական վարկերի պետական սուբսիդավորումը: Նախարարը տեղեկացրեց, որ պարարտանյութի 1 պարկը տրվելու է 6000 դրամով, երբ շուկայական գինը դարձել է 9000 դրամ, իսկ դիզվառելիքը՝ 350 դրամով:

Ըստ Հայկ Բաբուխանյանի՝ Քոչարյանը շատ սխալներ է գործել եւ դժվար թե կարողանա վերադառնալ

Երեկ ՀՀԿ խմբակցության պատգամավոր, ՍԻՄ նախագահ Հայկ Բաբուխանյանը, լրագրողների հետ հանդիպելով՝ մի շարք հետաքրքրական բաներ է ասել: Նա նշել է, որ Վանո Սիրադեղյանի վերադարձը ձեռնտու չէ Լեւոն Տեր-Պետրոսյանի համար, ու Վանոյի վերադարձի դեմքում Տեր-Պետրոսյանը «կփախնի», քանի որ ժամանակին Վանոն չէր կարող միայնակ ինչ-որ բան անել. Բաբուխանյանը, սակայն, ճիշտ է համարել, որ Սիրադեղյանը վերադառնա, դատական գործընթացով անցնի ու պատասխան տա: Անդրադառնալով Ռոբերտ Քոչարյանի գործոնին՝ Հ. Բաբուխանյանը կարծիք է հայտնել, որ Ռ. Քոչարյանը ժողովրդի մեջ հենարան չունի եւ չի կարող վերադառնալ քաղաքականություն, եւ իր նախագահելու օրոք շատ սխալներ է թույլ տվել: Սխալների թվում նա նշեց Տեր-Պետրոսյանի ժամանակից ծնունդ առած քաղաքական հակակարգի զարգացումը Ռ. Քոչարյանի օրոք, որի դեմն այսօր փորձ է արվում առնել, ու բերեց նոր Ազգային ժողովի առավել քաղաքականացված լինելու հանգամանքը:

Մ. Խ.

Հենրիկ Լիլոյան-80

Օգոստոսի 27-ին լրանում է նշանավոր լրագրող, պատմաբան, դիվանագետ, կուսակցական ու պետական գործիչ Հենրիկ Ցոլակի Լիլոյանի (1932-1999) ծննդյան 80-ամյակը: Այդ լուսավոր անձնավորության, «Ազգ»-ի հավատարիմ բարեկամ ու մշտական հեղինակի ապրած տարիներին ու արված գործերին է նվիրված Ռուսաստանի հայերի միության առաջին փոխնախագահ, ԽՍՀՄ արտակարգ եւ լիազոր դեսպան Գեորգի Տեր-Ղազարյանցի հոդվածը, որը կտպագրենք թերթիս երեքշաբթի օրվա համարում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841
060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Մեկնաբանություն

Քաղաքի հոտը

Ջմռանը Երեւանի քաղաքային ավագանին աղբահանության սակագների ու դրանք ժամանակին չմուծելու տուգանքների չափ էր որոշում: Սովոր ենք. տարբեր ծառայությունների (առաջնահերթ կենսականության) գներ, նոր հարկեր ու հարկաչափեր, տուգանքներ ավելացնելուց ավելի հեշտ բան Հայաստանում չկա: Հայ ղեկավարը, իշխանավորը երկրի, իր ժողովրդի անվտանգության, սոցիալական աղահովության երաշխավո՞րն է, ի՞նչ է: Այդ երաշխավորը ՀՀ Սահմանադրությունն է, նա էլ թող մտածի իր քաղաքացիների մասին: Ու մտածում է, երկար, շատ երկար է մտածում:

Ավագանու մտքով չանցավ էլ, որ որոշման մյուս երեսն էլ պետք է լինի, պետք էր հասակեցնել ոչ միայն ծառայության գինը, այլեւ կանոնակարգվեր դա, որ բնակիչը իմանա, թե աղբահանությունը ինչ պարբերությամբ են պարտավոր կատարել: Ստացվում է՝ մի կողմը պաշտվում է, մյուս կողմը՝ շահում: Իսկ իրականում տուժում է քաղաքը, տուժում ենք մենք, որ ահա ամռան տոթ այս օրերին աստիճված ենք լինում եւ՝ հաճախակի չշնչելու, որովհետեւ օդը աղտոտված է, կամ շատ արագ, նույնիսկ վազքով անցնել ահռելի աղբակուտակներով լցված փողոցները:

Իսկ բարձրահարկ շենքերում աղբը կուտակվում է բունկերներում ու կուտակվում, եւ ով գիտի, որքան է այդպես թթվում-մնում, մինչեւ նեխահոտը շենքը, ողջ տարածքը չբռնի, մինչեւ բնակիչները տնեսուն ընկած ստորագրություններ չհավաքեն՝ դիմում-բողոքներ, որ աղբը ժամանակին եկեք-տարեք, թե չէ՝ խեղդվում ենք:

Պարզվում է՝ շենքի բնակիչները (Քեռու փողոց, թիվ 58) հենց սկզբից, դեռ 21 տարի առաջ դատարկված էին. աղբատարի հարցում բախտները չէր բերել. սխալ դիրքով էր տեղադրվել հարկերից մեկում աղբատարի մեսաղաթիթեղը: Ու սրանից միշտ տուժել են, եւ նաեւ՝ որովհետեւ աղբը ամիսներով կուտակվում ու տեր դարձող չկա, փոխարենը՝ բնակիչներից կանոնավորապես փող հավաքողը կա, դեռ չտալու դեպքում էլ՝ տույժերը կան: Տարիներն անցնում եւ մեսաղաթիթեղները շարքից դուրս են գալիս, ծակծկվում, եւ ահա կուտակված աղբի կեղտաջրերը ոչ միայն հոսում են բակով մեկ, որտեղ երեխաներ են խաղում ու ամենավատը՝ համարյա միշտ գնդակով, այլեւ արդեն լցվում են 2-րդ հարկի միջանցքները՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ, զանազան միջատների ու կրծողների համար նպաստավոր պայմաններով: Արդեն որերորդ օրն է վերելակի մոտ կանգնելն ուղղակի վտանգավոր է, հոտը անմիջապես ազդում է սրված նյարդերիդ վրա, ուզում ես փախչել, ոտքով բարձրանալ, բայց նույն հոտը հետապնդում է հարկից հարկ անցնելիս, գլխապտույտ-գլխացավ առաջացնում: Ամեն հարկում աղբատարին փակցված գրությունը խնդրում է բնակչին աղբը իջեցնել ներքեւ, այսինքն՝ բացել բունկերի մեսաղյա դուռը, զգուշորեն կանգնել, որ կեղտաջուրը չընկնես ու աստիճված շնչել երկար ժամանակ կուտակված հոտ աղբակույտի սուր նեխահոտը: Հետո ավագանին տուգանքների նոր չափաբաժին կավելացնի, կյանքդ, առողջությունդ անտեղի վատնած անցած օրերի՝ այս գաղջ, անմարդկային պայմանների ու զրկանքների համար:

Քաղաքը շոգի մեջ տապակվում է, բնության քմահաճույքն է, որի մեջ մեր մեղքի բաժինը որքա՞ն է, չգիտենք, կամ ձեւացնում ենք՝ թե չգիտենք: Շոգի դեմ ոչինչ չենք կարող անել, բայց հո կարող ենք փողոցների աղբը մաքրել: Թվում էր՝ փողոցային աղբահանությունը, գոնե ամռանը, ավելի կանոնավոր ու ժամանակին պիտի որ արվի: Բայց՝ ոչ: Օրվա որ ժամին դուրս գաս՝ փողոցներում տեղադրված մեսաղյա աղբատարները ցուցադրում են իրենց այլանդակությունը, միշտ լեփ-լեցուն, կատուներն էլ թառած, անպակաս: Իսկ հո՞տը: Այդ հոտը արդեն քաղաքի նկարագիրն է. աղբահավաք մեքենան անցնում, հետեւից թողնում է հետքը՝ կեղտաջրերը հոսում, անցնում են փողոցից փողոց, ու բարձրանում է քաղաքի գաղջ հոտը՝ մեր անմաքուր կյանքի ամենասուր նշանը:

Շենքի բնակիչները դիմում-բողոքով խնդրում են ազատել իրենց աղբահոտից, ճարահատ համաձայնում աղբատարը հանելուն, չեն էլ մտածում, թե աղբը տնից հանելուց հետո ուր են թափելու, շատերի համար գուցե թե մեկ է, կարելի է փողոցի մի անկյունում, ծառի բնի, էլեկտրասյան կողքը կամ պատի տակ շարել: Միեւնույն է, սովոր ենք, քաղաքը սովոր է, ինչ տարբերություն, աղբատար կա, թե չկա, սրանք պռնկեպռունկ լիքն են միշտ, կողքերին՝ դիզված, թափված, շաղ տված ամեն աղտեղությամբ: Նեխահոտը գրավել է քաղաքի մթնոլորտը, լցվում է տները (բնակիչները գրում են, որ պատուհաններն այս շոգին ստիպված են փակել կեղտահոտից չխեղդվելու համար), վտանգում մեր առողջությունը, քայքայում նյարդերը ու ամենավտանգավորը՝ այն սպառնում է մյուս ախտ-արատների նման դառնալ սովորական, այսինքն՝ սովորեցնել իրեն՝ հոտին, այն ամեն այլանդակի պես, ինչին տարիների ընթացքում վարժեցրին, ընտելացրին բոլորին. լսել անլսելին, անել անկարելի թվացողը, անտարբերանալ, ծախվել-ծախել, քծնել-խաբել, ստորանալ-ստորացնել, կաշառել ու կաշառվել, թքել պատվի, արժանապատվության, հարգանքի, մարդկային ամեն բարոյականի վրա, սովորել վատին, տրվել մտքի ծուլությանը, անկարողությանը, անձարակությանը, մի խոսքով՝ մոռանալ մարդավարի, քաղաքավարի ապրելը, ք բնակավայրը, քաղաքը աղբանոց չդարձնելը- ամեն առումով:

«Քաղաքում մի ծաղիկ են տնկում, քաղաքապետը մի դյուժին լրագրող հետեւից գցած, գնումներկայանում է, բա՞ փողոցների աղբը, տրանսպորտից կախ ընկած շունչները կտրող մարդկանց, գետնուղիների առեւտրի հեղձուկը, քաղաքի հոտը չի՞ տեսնում»,- ասում է ստորագրություն հավաքող կինը:

Չէ՛, հոտը չի «տեսնում»: Հոտը նկարագրել չի լինում, ձայնագրել չի լինում, պատմել չի լինում. այս հոտը արդեն անշնչելի է դարձնում քաղաքը:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Կրթության եւ գիտության նախարարությունը տեղեկացնում է

Զանգվածային լրատվության որոշ միջոցների կողմից անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված առաջին դասարանցիներին համակարգիչներով ապահովելու ծրագրին: Այս առնչությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը հարկ է համարում տեղեկացնել, որ առաջին դասարանցիներին համակարգիչներ տրամադրելու ծրագիրը Հայաստանի հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրի կրթության ոլորտի դրույթներից է, որը, որպես խիստ կարեւոր եւ նորարարական առաջարկ, ներառվել է ՀՀ կառավարության գործունեության 2012-17 թվականների ծրագրում:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից երբեւէ չի հայտարարվել, որ ՀՀ դպրոցներ հաճախող առաջին դասարանցիներին համակարգիչներ հասկացնելու ծրագիրը մեկնարկելու է 2012-13 թթ. ուսումնական տարվանից: Կառավարության ծրագրի կրթության ոլորտում նախատեսված աշխատանքներն իրականացման ընթացքում են եւ ՀՀ կրթությանն եւ գիտության նախարարության կողմից այդ մասին հանրությանը մշտապես տեղեկատվություն է ներկայացվում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բժիշկ-հիվանդ անկատար ու երբեմն վտանգավոր շփումները

Ովքե՞ր են ավելի անպատշաղ՝ բժիշկնե՞րը, թե՞ հիվանդները: Եթե շատերն պատասխանել, կընտրեին երկրորդ տարբերակն առանց երկար մտածելու, քանի որ բազմաթիվ օրինակներ ունենք բժիշկների անփութության, բժշկական սխալների ու դրանցից տուժած հիվանդների: Ընդունենք, որ հիվանդներն ավելի անպատշաղ են, բայց դա դեռ չի նշանակում, որ պատշաղված են բժիշկները:

Ցավոք, սեփական առողջության ու բժիշկների հանդեպ դրսեւորվող վերաբերմունքը, ավելի շուտ՝ մշակույթը մեզ մոտ դեռեւս չի հասել այն մակարդակին, որպեսզի շատերը հասկանան, որ առողջության հարցերը չի կարելի լուծել բռունցքի ուժով ու բժշկին ծեծելով կամ էլ բուժաշխատողի գրպանը գումար դնելով:

Ինչո՞ւ վերեւում օգտագործեցի մշակույթ բառը, որովհետեւ սեփական առողջությունը գնահատելը, պահպանելու գիտակցումը, մյուս կողմից էլ բժիշկների պատասխանատվությունն ու վերաբերմունքը հիվանդի հանդեպ ձեւավորում են մի ամբողջ մշակույթ, որը մեզանում, դժվար է ասել, թե չկա, սակայն եղածն էլ այնպես աղճատված է, որ տուժում են ե՛ւ հիվանդները, ե՛ւ բժիշկները: Պատճառները բազմաթիվ են: Օրինակ՝ հիվանդի ազգականը կարծում է, թե իրավունք ունի ծեծելու շատ օգնության բժշկին՝ ուշանալու կամ պարզապես հիվանդի կյանքը չփրկելու պատճառով՝ առանց հասկանալու, որ բժիշկը միգուցե չի էլ ուշացել կամ ուշացել է ոչ իր մեղքով, իսկ հիվանդին փրկելն արդեն վեր է եղել նրա ուժերից: Արագ գործի են դնում բռունցքները, առանց ժամանակ կորցնելու, որովհետեւ հազիվ գտել են «մեղավորին»:

Բժիշկը նույնիսկ «մեղավոր» է դառնում, երբ տալիս է ախտորոշում անբուժելի հիվանդության մասին: Բժշկին անգամ ծեծել են օնկոլոգիական հիվանդությունն ախտորոշելու պատճառով՝ առանց հասկանալու՝ ի՞նչ մեղք ունի բժիշկը: Բայց մյուս կողմից՝ քիչ չեն դեպքերը, երբ բժիշկները սխալ ախտորոշում են տվել, սխալ բուժում նշանակել ու այնքան ժամանակ մի դոնից մյուսն ուղարկել հիվանդին, որ վերջինս բուժվելուց հույսը կտրել է:

Բայց որեւէ դեպքում էլ ծեծն ու բժշկական սխալն արդարացում չունեն, պատժելու համար կան իրավապահ մարմիններ, թե ի՞նչ պատիժ կսահմանեն, դա նրանց գործն է:

Արդարացում չունի եւ երեխաներին շփոթելու դեպքը մեր հիվանդանոցներից մեկում, երբ մի երեխայի փոխարեն վիրահատական սեղանին պառկեցրել էին ուրիշ երեխայի: Հիշենք նաեւ փետրվարին՝ Աբովյան քաղաքի ծննդատանը, մոր ու նրա չծնված երեխայի մահվան մասին: Աբովյանի ծննդատան դեպքի առնչությամբ հարուցվեց քրեական գործ, մեղադրանք առաջադրվեց բժիշկ-անեսթեզիոլոգին:

Բժշկական սխալների օրինակներն էլ շատ են, սակայն թվարկածներս եզրափակեմ մի դեպքով, երբ բժիշկը հիվանդին սխալ ախտորոշում էր տվել՝ կանխատեսելով ընդամենը 3 ամսվա կյանք, իսկ երբ հիվանդն արդեն բուժվելուց հետո գնացել էր նույն բժշկի մոտ, վերջինս առանց ամաչելու ասել էր. «Ինչո՞ւ եք եկել, արդեն պետք է մահացած լինեիք»: Թվարկված օրինակները պատկերում են բժշկական մեր աղճատված մշակույթի միայն մի փոքր մասը, դեռ չեմ խոսում բժշկի դիմելուց խուսափելու մասին, իսկ խուսափելն էլ ոչ այնքան գումարի պատճառով է, որքան վստահության պակասի:

Հայերս մի ուրիշ հատկություն էլ ունենք, աստվածացնում ենք բժշկին, եթե օգնում է մեզ, իսկ հակառակ դեպքում՝ քննադատում, փնովում, գործը մինչեւ ծեծի հասցնում: Պատշաղության կարիք ունեն եւ բժիշկները, ինչին ուղղված վերջերս ստորագրահավաք սկսել են հենց իրենք՝ բուժաշխատողները պահանջելով 10 տարով ազատազրկումը կիրառել որպես պատիժ աշխատանքի ընթացքում բուժաշխատողի հանդեպ բռնություն կիրառողի նկատմամբ: Նախաձեռնության հեղինակներն ընտրել են «եկեք առաջինը ինքներս լինենք մեր պատշաղը» կարգախոսը: Սա ընդամենը ստորագրահավաք է, բայց արդեն զգուշացնում է, տեղեկություն, որ պատշաղված չեն եւ բժիշկները: Բայց բժիշկներն էլ իրենց հերթին պետք է գիտակցեն, որ յուրաքանչյուր հիվանդի պատշաղված լինելն առաջին հերթին կախված է բժշկից, նրա գիտելիքներից ու ուշադրությունից: Եվ այդ մշակույթ ասվածը կարող է հղկվել, օգտավետ դառնալ երկու կողմերի՝ հիվանդի ու բժշկի միջոցով:

Իսկ իրավապահ մարմիններն իրենց անաչառ հետաքննությամբ ու որոշումներով պետք է ապացուցեն, որ նրանք, ովքեր խաղում են հիվանդի թե բժշկի կյանքի հետ, օրենքի կողմից անպատիժ չեն մնում: Եվ միայն այս դեպքում բոլոր բժիշկների համար արդեն թանկ կլինի իրենց յուրաքանչյուր հիվանդի կյանքը, իսկ հիվանդի ու նրա ազգականների համար բժիշկը չի դառնա խավության նոխազ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սփյուռքի նախարարությունն իրականացնում է սիրիահայ երեխաների հաշվառում

Սիրելի՛ սիրիահայեր, եթե որոշել եք ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատել Հայաստանում, եւ ձեր երեխաները պետք է հաճախեն դպրոց, խնդրում ենք գնալ Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչություն, հասցեն՝ Արգիշտի 1: Խնդրում ենք գրանցվել, անկախ այն հանգամանքից՝ արդեն ընդունել տվել եք ձեր երեխաներին որեւէ դպրոց, թե ոչ:

ՀՀ սփյուռքի նախարարություն

Ամերիկյան ընտրություններ

Միացյալ Նահանգներում ընտրությունների տարում բոլոր լրատվամիջոցները գերհագեցած են միայն այդ թեմայով՝ ընտրությունների մասին լուրեր հաղորդելով, հաճախ մոռանալով, որ այլ արժանի լուրեր եւ զարգացումներ եւս կատարվում են աշխարհում, որոնք արժանի են լուսաբանման, քանի որ կարող են այս կամ այն կերպ ազդել մեր աղրուսի եւ, ինչու չէ, նաեւ մեր երկրի աղագայի վրա:

Այսօր Բուշի վարչակարգի սկսած երկու պատերազմները (Իրաքի եւ Աֆղանստանի) միեւնույն վայրագությամբ շարունակվում են եւ հյուծում մեր տնտեսությունը:

Քլինթոնի վարչակարգն իր երկրորդ շրջանն ավարտեց բյուջեի ավելցուկով: Բուշ-Չեյնիի վարչակազմ այդ ավելցուկն սպառելուց բացի բյուջեի հսկայական պակասորդ թողեց իր հետեւից:

Բարաք Օբամայի նախագահ ընտրվելուց ի վեր օրենսդրական ամեն մի նախաձեռնություն ընդդիմության արժանացավ հանրապետականների կողմից (նույնիսկ երկրին վնաս հասցնելու գնով) պարզապես նրան ընտրվելու երկրորդ հնարավորությունից զրկելու նպատակով: Դա, իհարկե, հանրապետականներին հաջողվեց եւ որպես զենք կարող է ծառայել նրանց՝ բարձրաձայնելու, որ Օբամայի վարչակարգին չհաջողվեց բարելավել տնտեսությունը, ինչ որ արտահայտ կարող է ճիշտ լինել, եթե հաշվի չառնենք Բուշի ժամանակաշրջանի ձախողումները:

Հանրապետական կուսակցության նախագահի թեկնածու Միթ Ռոմնին իր ընտրարշավն սկսեց տնտեսական ճգնաժամի բարձակետում եւ կարողացավ դրական շրջադարձ հաղորդել այդ արշավին որպես հաջողակ գործարար, որը հույս էր ներշնչում, թե տնտեսության մռայլ պատկերը կփոխվի: Բայց քանի արշավն առաջ ընթացավ, նրա «հավատարմագրերը» խստագույն քննարկման ենթարկվեցին, եւ հեղինակությունը՝ որպես կարող եւ ազնիվ գործարարի, խաթարվեց, հատկապես այն բանից հետո, երբ հակառակորդներն սկսեցին փորփրել «Բեյն կապիտալի» սկանդալային գործը, որը նրան 473 միլիոն դոլարի զուտ եկամուտ էր աղահովել:

Որեւէ նախագահ կամ նախագահական թեկնածու անգամ երկինքը կարող է խոստանալ իր հանրությանը, սակայն եթե չունի օրենսդիր մարմնի պաշտպանությունը, չի կարող պահել իր խոստումը: Դա պարունակում է պաշտպանական մի մեխանիզմ, որը թույլ է տալիս ձախողության դեպքում մեղադրել Կոնգրեսին: Այս նախագահական ընտրությունների հետ կապված հարցերն այնքան շատ ու բազմազան են, որ յուրաքանչյուր կողմ պիտի փորձի ծայր աստիճան փորփրել դրանք, որպեսզի վարկաբեկի հակառակորդին:

Ներկայումս Պոլ Ռայան անունով հանրապետական մի եռանդուն երիտասարդ է ասպարեզ իջել որպես փոխնախագահի թեկնածու՝ խորտակելու Օբամայի առողջապահական ծրագիրը: Սկզբնական շրջանում Ռոմնիի եւ Ռայանի առողջապահական ծրագրերն իրարից խիստ տարբերվում էին եւ նույնիսկ հակադրվում միմյանց: Բայց երկու թեկնածուները շատ արագ կարողացան հաշտեցման եզրեր գտնել, հասկանալով, որ առողջապահության խնդիրը դառնալու է, ավելի ճիշտ՝ արդեն իսկ դարձել է, ընտրարշավի ամենաթժ խնդիրներից մեկը:

Արտաքին քաղաքականությունը չի նշվում ընտրարշավի քննարկումներում, որովհետեւ ենթադրվում է, որ Միացյալ Նահանգները կարող է լուծել եւ կլուծի բոլոր խնդիրները զենքի ուժով: Բայց խոստովանենք, որ պաշտպանական հարցը մնում է առաջնային, եւ Օբամայի վարչակազմը ամեն ինչ անում է կրճատելու օտարերկրյա պատերազմները եւ աննպատակ ծախսերը:

Միացյալ Նահանգները ոչ միայն գերտերություն է, այլեւ գեր-գերտերություն, որը կարող է իր ամենաարդիական զինապաշարով ծնկի բերել հնարավոր որեւէ հակառակորդի կամ թշնամու: Սակայն Ամերիկայի ուժեղ կեցվածքն ու աղահովությունը դարձել են էվֆեմիզմներ լիցքավորելու ռազմարդյունաբերության ամբողջ համակարգը, մի բան, որին ընդդիմանում էր նախագահ Դուայթ Այզենհաուերը եւ զգուշացնում՝ իր իշխանության վերջին օրերին: Բացի երկու կողմերի մի քանի գաղափարական մոլեռանդներից, ամերիկացիների մեծամասնությունը ընտրությունների ժամանակ քվեարկում է տնտեսության վիճակից ելնելով: Եթե տնտեսությունը բարելավման նշույլներ ցույց տա ընտրարշավի մնացած օրերին, ապա հաստատ կարելի է ասել, որ ներկայի վարչակազմը կմնա տեղում, իսկ եթե է՛լ ավելի վատթարանա, ապա, անկախ իրենց ընտրության հետագա արդյունքից, քաղաքացիները նախընտրելու են փոփոխությունը, եւ քվեարկելու են հօգուտ նոր «փրկարարի»:

Շահագրգռված խմբակցությունները անշուշտ ունեն իրենց սեփական գործելաոճը եւ օրակարգը: Տասնմեկ միլիոն անօրինական օտարականների հանդեպ Օբամայի վարչակարգի ցուցաբերած մեղմ քաղաքականությունը անտարակույս իր դրական ազդեցությունը թողնելու է լատինամերիկյան համայնքների վրա: Մյուս կողմից, սակայն, այդ մեղմ քաղաքականությունը՝ հանդեպ Կուբայի նոր ղեկավարի, կարող է վտանգի ենթարկել ընտրարշավի գլխավոր մարտադաշտերից մեկի՝ Ֆլորիդայի քվեարկության արդյունքները: Այնպես որ վարչակազմը պարտավոր է չափավորել իր քաղաքականությունը եւ համաձայնեցնել այն հասարակության տրամադրություններին, որպեսզի կարողանա աղահովել նախագահ Օբամայի վերընտրությունը:

Հրեաների քվեները անշուշտ վճռորոշ են որեւէ թեկնածուի համար: Իսրայելական քարոզչությանը սիրաշահելը դեռ բավական չէ: Բենջամին Նաթանյահուն «ամբողջական կապիտուլյացիայից» բացի որեւէ այլ իրավիճակի չի համաձայնելու: Երկու պետություն ստեղծելով պաղեստինյան թնջուկը լուծելու առաջարկը այնքան էլ լավ չընդունվեց Իսրայելի բարեկամների կողմից: Այնպես որ հակառակ Իսրայելի անվտանգությանը ցուցաբերած իր պարտավորվածությանը, Օբաման կարող է սառն ընդունելության արժանանալ իր հրեա ընտրազանգվածի կողմից:

Մյուս կողմից, հանրապետականների խոստումնալից թեկնածուն առավելագույն ծառայությունը մատուցեց անձամբ Իսրայել այցելելով եւ փորձելով սիրաշահել հրեաների քվեները: Նա Երուսաղեմը հայտարարեց Իսրայելի մայրաքաղաք՝ այդպիսով գերադասություն ձեռք բերելով Մ. Նահանգների ավանդական դիրքորոշման հանդեպ, որ Թել Ավիվն է ճանաչում որպես Իսրայելի մայրաքաղաք: Սա, իհարկե, հակամարտության աղագա հանգուցալուծումը թեթեւլու է մի կողմի վրա, քանի որ պաղեստինցիներն էլ իրենց հերթին պայքարում են, որ արեւելյան Երուսաղեմը դառնա իրենց մայրաքաղաքը:

Հաշվի առնելով, որ ներկա վերիվայրումների հետեւանքով արաբական աշխարհը ի վիճակի չէ հակընդդեմ քայլեր ձեռնարկելու, Ռոմնին մեկ այլ թունոտ արտահայտություն ունեցավ՝ համեմատելով պաղեստինցիների ձեռքբերումները իսրայելցիների նվաճումների հետ: Նա նշեց, որ պաղեստինցիները շատ չեն առաջադիմել «մշակութային որոշ տարբերությունների» հետեւանքով, ինչպես օրինակ՝ ստրադասության բարդույթը (մոռանալով, որ Իսրայելի կառավարությունը նրանց կոկորդից բռնած է): Նա գովաբանեց Իսրայելի ծաղկուն տնտեսությունը, դարձյալ մոռանալով, որ Ամերիկայի հարկատուների փողերով է սնվում այդ տնտեսությունը: Նրա ծիծաղելի արտահայտությունը ցնցեց նույնիսկ հյուրընկալ երկրի ղեկավարներին, իսկ պաղեստինցիները նրան արդարացիորեն «ռասիստ» անվանեցին:

Քանի որ յուրաքանչյուր խմբավորում առաջնորդվում է իր շահերից ելնելով, հայերը նույնպես իրավունք ունեն օգտվելու այդ հնարավորությունից: Մեզ համար առաջնային խնդիրներ են Ցեղասպանության ճանաչումը, ամերիկյան օգնությունը Հայաստանին եւ Արցախին, Ղարաբաղի հակամարտությունը:

Մինչեւ օրս կողմերից ոչ մեկը չի անդրադարձել այս խնդիրներին, իսկ ժամանակը սպառվում է: Հանրապետականների խոստումնալից փոխնախագահի թեկնածու Պոլ Ռայանը, ըստ լուրերի, Հայկական Ցեղասպանության ճանաչման վերջին բանաձեւի համահովանավորներից է: Բայց դա մեծ արժեք չունի, քանի որ Օբաման եւ Բայդենը նույնպես կողմնակից էին ցեղասպանության ճանաչմանը մինչեւ իրենց ընտրվելը: Ընտրվելուց հետո նրանք պար են բռնել «ց» տառի շուրջը, որովհետեւ դարձել են գերի՝ իրենց քաղաքական համակարգին:

Արդար լինելու համար, այնուամենայնիվ, պետք է նշել, որ Օբաման ամենամոտ գնաց Ցեղասպանություն բառի իր բնորոշման մեջ: Նա համարձակվեց Անկարայում իր ելույթի ժամանակ թուրքերին հիշեցնել, որ պետք է առերեսվեն իրենց պատմության գորշ էջերի հետ: Բայց դա, իհարկե, չի համապատասխանում այն գրավոր պարտավորվածությանը, որ նա կատարել էր նախքան նախագահ ընտրվելը:

Ընտրվելուց հետո ամենաբարոյական թեկնածուն անգամ դժվում է իր խոստումը՝ առաջնությունը տալով քաղաքական նպատակահարմարությանը:

Բայց հայերն արդեն սովորել են նման քաղաքական մեքենայություններին եւ երդվել են հավատարիմ մնալ Ցեղասպանության ճանաչման հարցին: Չմոռանանք ֆրանսիական տարբերակը, երբ Սարկոզին շատ մոտ էր վավերացմանը, բայց նա ձեռքից բաց թողեց հնարավորությունը եւ թույլ տվեց, որ ընդդիմադիրները ոչ սահմանադրական հռչակեն օրինագիծը:

Նորընտիր նախագահ Ֆրանսուա Օլանդը նույն խոստումն է տվել, բայց երկրի արտգործնախարարի վերջերս տված հարցազրույցը «Էքսպրես» շաբաթաթերթին կասկածի տեղիք է տալիս: Այն հարցին, թե ինչպե՞ս է նախագահը խոստումը պահելու առանց վիրավորելու Անկարային (քանի որ Ֆրանսիան Թուրքիայի աջակցության կարիք ունի սիրիական հարցում), նախարար Լորան Ֆաբիուսը պատասխանել է.

«Մենք փորձում ենք ճանապարհներ որոնել երկու հարցերը միմյանց հետ համաձայնեցնելու համար» երկիմաստ կամ բազմիմաստ բառերով: Եթե մենք պատմությունից դասեր քաղել ենք, ապա շատ լավ գիտենք, թե ինչ է նշանակում այդ նախադասությունը: Դա միանշանակ մի նոր դրժում է նշանակում:

Վերադառնալով ընտրությունների թեմային, ինչպես նշեցինք, կողմերից ոչ մեկը չի արձագանքել դեռ հայկական հարցերին: Սա հայ քվեարկողներին թողել է մի անորոշության մեջ: Օբամայի դեպքում որեւէ խոստում նվազ նշանակություն ունի այլեւս, քանի որ նա կարող էր եւ հիմա էլ դեռ կարող է իրականացնել այն, քանի դեռ նախագահ է: Իսկ Ռոմնին կարող է որոշակի քանակի քվեների տիրանալ, եթե վերջին րոպեին դրական արտահայտություններով հանդես գա:

Պետք է նշել, սակայն, որ ոչ բոլոր հայերն են Ցեղասպանության հարցը վճռորոշ գործոն համարում քվեարկության պարագայում:

Ներկայումս չարակամ մի արշավ է մղվում Օբամայի դեմ ռասայական հողի վրա, եւ դժբախտաբար հայերից շատերը ներգրավվել են դրանում: Նախագահի մաշկի գույնն ու միջին խավի նրա պաշտպանությունը կարծես խրտնեցրել են այդ հայերին:

Առայժմ հայերն սպասողական դրության մեջ են: Նրանք սպասում են Գոդոյին:

(*) «Գոդոյին սպասելիս», վերնագիրն է Սամուել Բեքեթի աբսուրդի ժանրի պիեսի, որտեղ գործող անձինք հույսով սպասում են մի փրկարարի:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ. Հ. Ծ.

Գոդոյին սպասելիս(*)

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Ինչո՞ւ էին աղդամցիներն ուզում հասել «ռազմաճակատային» գիծը

Երբեմն ցանկություն է առաջանում այլեւս չհետեւելու ադրբեջանական մամուլին: Զանձրալի է, հոգնեցուցիչ: Ավելին, լինում են պահեր, երբ սիրված ես լինում արձանագրել, որ հարեւան երկրում հիմարանալու հնարավորություններն ու միջոցներն անսպառ են: Իսկ իմաստնությունն ասում է՝ «հիմարի հետ գլուխ մի դիր»: Բայց սիրվածած ես անձնական ադրումներդ կողմ թողնել, քանի որ հարկ է «մինչեւ արմատը» պարզել, թե ում հետ եւ ինչ գործ ունենք:

Վերջերս Բաքվում կայացել է «Կարկուտ» կինոֆիլմի շնորհանդեսը: Այն նկարահանվել է Միլլի մեջլիսի պատգամավոր, «Ծագումով աղդամցի» Ագիլ Աբասովի հեղինակած սցենարի հիման վրա: Միջանկյալ նկատենք, որ պրոֆեսիոնալ «կինոշնիկները» հավանաբար հրաժարվել են կատարել իջեցված «պետպատվերը», ուստի «ազերբրոքն» սիրվածած է եղել բավարարվելու կինեմատոգրաֆիայում անհայտ մի մեջլիսականի «տաղանդի պոռթկումով»: Ֆիլմը նկարահանվել է Աղդամի «օկուպացման» թեմայով: Այդ առթիվ սցենարի հեղինակն ասել է, որ «եթե ֆիլմը ցուցադրվեր բանակում, ապա շատերը կկրնեին Մուբարիզ Իբրահիմովի սխրանքը»:

Խոսքն ադրբեջանցի դիվերսանտի մասին է, որի դիակը բավական երկար ժամանակ անթաղ էր մնացել Արցախի ՊԲ առաջապահ զորամասերից մեկի խրամատում եւ հակառակորդ կողմին հանձնվեց, երբ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդը խնդրանքով դիմեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին: Նկատենք նաեւ, որ արցախյան կողմը միշտ է պատրաստ «ըստ արժանվույն դիմավորելու» մուբարիզիբրահիմովներին: Բայց անցնենք առաջ: Ֆիլմի սցենարիստը եւ ռեժիսորը պատմում են, որ եզրափակիչ տեսարանն ըստ մտահղացման ներկայացնում է պահը, երբ «աղդամցիները վերադառնում են իրենց ազատագրված հողը»:

Այս տեսարանը նկարահանելու համար ընտրվել է զորքերի շփման գծին չափազանց մոտ վայր, իսկ «մասսովկա»-ի համար հրավիրվել են ոչ թե դերասաններ, այլ՝ տեղի շուրջ 200 բնակիչ: «Երբ ես ասացի՝ «մոտոր», եւ սկսվեց տեսարանի նկարահանումը, կարճ ժամանակ անց նկատեցի, որ մարդիկ իրոք շարժվում են դեպի ճակատային գիծը: Ես գոռացի՝ «Կանգ առեք, ո՞ւր եք գնում», պատմել է ֆիլմի ռեժիսորը եւ ավելացրել, որ հայկական դիրքերից ամեն ինչ այնքան լավ էր երեւում, որ «դիպուկահարը կարող էր հանգիստ մի քանի հոգու սպանել»:

Այս մասով ռեժիսորը «լյաղ» է թույլ տվել: Պաշտոնական քարոզչությունը պնդում է, որ «հայ դիպուկահարները կենդանի թիրախ են փնտրում, որպեսզի կյանքից զրկեն՝ չխնայելով կանանց , ծերերին եւ անգամ մանկահասակ երեխաներին», իսկ այստեղ պարզվում է՝ 200 հոգուց ամբոխը գոռում-գոչյունով նեսվել է արցախյան դիրքերի վրա եւ ոչ մի կրակոց չի հնչել: Ըստ երեւույթին, սցենարիստ մեջլիսականը եւ «համկալ» ռեժիսորը միջադեպ հրահրելու նպատակով են ֆիլմի եզրափակիչ տեսարանը նկարահանել «իրականին մոտ» իրավիճակում: Պատկերացնո՞ւմ եք ինչ տեղի կունենար, եթե ադրբեջանական կինոխցիկը ֆիքսեր «մասսովկա»-ի վրա արցախյան դիրքապահների արձակած կրակոցները: Ինչ վայնասուն կբարձրացներ Բաքուն, եթե «դերասաններից» մեկը սպանվեր: Բարեբախտաբար արցախյան զինվորականությունը սադրանքի չի տրվել:

Բայց ամենահուզիչը շփման գիծն անցնելու՝ «մասսովկա»-ի մասնակիցների ցանկությունն է: Սցենարիստը դա բացատրում է «նույնիսկ անզեն ձեռքերով հայրենի հողերն ազատելու բուռն ցանկությամբ», ինչի գոյությանն ինքը իրավամբ կասկածել է մինչ այդ: Մենք հակված ենք ենթադրելու, որ շփման գծից այն կողմ իրավիճակն այնքան նողկալի եւ ստորացուցիչ է, որ մարդիկ պարզապես փորձել են առիթն օգտագործել եւ հանձնվել արցախցի դիրքապահ զինվորներին: Երեւի դա նրանց համար աստղային ժամ էր: Իսկ ռեժիսորն ու սցենարիստը «ծեծկռտուքի գնով», ինչպես իրենք են ասում, նրանց կանգնեցրել են, քանի որ հակառակ դեպքում իշխանությունները նրանց կդատեին որպես «պետական դավաճանների»: Ափսոս, երկու ապաշնորհ բանն կընկնեին, փոխարենը 200 աղդամցի ազատություն կստանային: Կշահեր նաեւ համաշխարհային կինեմատոգրաֆը. «Կարկուտ» կոչված կինոհիմարությունը էկրան չէր բարձրանա:

Վ. Ա.

Երբ խոսքը վերաբերում է հայերին, թուրք գործիչը չի տարբերվում փողոցային խուժանից

Այդպիսին է վարչապետ Էրդողանի իշխող կուսակցության Էրզրումի պատգամավորը

Հայկական դավադրության որոնումները սովորույթ են դարձել մարդասպան թուրք հրոսակի համար, այդ իսկ պատճառով էլ հրոսակը հայատյացության անզուսպ մոլուցքով է դրսեւորում իր փառաղանթ ազգի շաս ավանդական լայնախոհ հանդուրժողականությունը մյուս ժողովուրդների նկատմամբ: Թուրքական իրականության մեջ հայատյացությամբ տառապում են հասարակության անխտիր բոլոր խավերը, եւ այդ առումով ուսուցիչները, գիտնականները, արվեստագետները, իրավաբանները, գործարարներն ու պետական պաշտոնյաները ոչնչով չեն տարբերվում փողոցային թուրք խուժանից:

Հայկական դավադրության որոնումների պարագայում պաշտոնյաների, գործարարների եւ մտավորականների հետ խուժանին են միանում նաեւ թուրք պետական եւ կուսակցական գործիչները: Նրանցից թերեւս պետք է առանձնացնել վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության Էրզրումի պատգամավոր Մուհյեթդին Ասֆին:

Ի դեպ, այս տարի՝ փետրվարի 26-ին Սամբուլում «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» մակագրությամբ պաստառներով հանրահավաքի դուրս եկած հայուրհազարանոց թուրք-ադրբեջանական վիժվածքների ոհմակի առջեւ ելույթ էր ունեցել Ասֆաֆի կուսակից, ներքին գործերի նախարար Իդրիս Նաին Շահինը: Հայկական դավադրության որոնումներում Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավոր Ասֆաֆը նախարար Շահինի հայատյաց ելույթի ազդեցությա՞ն տակ է եղել, թե՞ որոնումներն արդյունք են PKK-ի դեմ թուրքական զինված ուժերի ձեռնարկած լայնամասշտաբ գործողությունների՝ Թուրքիայի համար ավելի քան անբարենպաստ ընթացքի, չգիտենք: Բայց որ թուրք օրենսդիրն այդ որոնումներում հայտնվել է Էրզրումում, սպանված PKK-ականի համար «չեզոքացվածի» փոխարեն «շանսասակ արվեց» արտահայտությունն օգտագործելու առաջարկով զանգվածային լրատվամիջոցներին դիմելիս, ակնհայտ է:

Օգոստոսի 23-ին «Ազգ»-ն անդրադարձել էր օրենսդիր խուժանի առաջարկին: «Յուրիթթի» օգոստոսի 23-ի եւ 24-ի համարներում էլ հաջորդաբար Ահմեդ Հաֆանն ու Սեդաթ Էրգինն են անդրադառնում: Հաֆանը գրում է. «Այն, ինչ տեղի էր ունեցել 80-ականներին, 90-ականներին, կրկնվում է 2012-ին: Ես սպասում էի, որ վերսին շրջառության մեջ դրվի «ահաբեկիչները (PKK-ի) հայ են» արտահայտությունը: Երկար չսպասեցի: Մուհյեդդին Ասֆաֆ կոչեցյալ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության պատգամավորը ասպարեզ իջավ: PKK-ի մասին խոսելիս ասաց. «Սրանք կրոնափոխ հայերի վաստակներն են»: Պարոն Մուհյեդդին, եթե ռասիզմով ես զբաղվելու եւ վատություն անելու, քեզ համար այլ ասպարեզ ընտրիր: Թիրախ մի դարձրու անմեղ հայ քաղաքացիներին»:

Նրան հավելում է Էրգինը. «Բացի «շանսասակ արեց» բառակապակցությունից, Ասֆաֆը դուրս տվեց խնդրահարույց այլ խոսքեր: Ելույթում նա պահանջեց PKK-ականներին չնույնացնել քուրդ եղբայրների հետ, ապա շարունակեց. «Մենք մեր քուրդ եղբայրներին դրանցից զանազանում ենք: Դրանք արդեն կրոնափոխ հայերի վաստակ են կամ էլ Սիրիայից, Իրանից մեր երկիր ներթափանցած տականքներ»: Երկու նստաշրջան Թուրքիայի ազգային մեծ ժողովում իշխող կուսակցությանը ներկայացնող պատգամավորի «կրոնափոխ հայի վաստակներ» արտահայտությունն անարգանքի եւ նսեմացնելու դրսեւորում են, որքան էլ դա Թուրքիայում տարածված լինի եւ չհաղթահարված նյարդային գրգիռ հանդիսանա հասարակության լայն զանգվածների համար: Այս մոտեցման թիրախը սոսկ հայերը չեն: Դա ուղղված է ազգային բոլոր փոքրամասնությունների՝ հույների եւ հատկապես հրեաների դեմ: Ամեն անգամ, երբ որեւէ գործիչ օգտագործում է «PKK-ականները կրոնափոխ հայերի վաստակ են» արտահայտությունը, Թուրքիայում բնակվող յուրաքանչյուր հայ իրեն վիրավորված է զգում: Իսկ երբ ասում են՝ «Նրա նախկին ամուսինը հրեա էր», ինչպես ասվեց պրոֆ. Էրսանլիի համար, վիրավորվում են բոլոր հրեաները»:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Ընդլայնվում է ԱՄՆ հակահրթիռային համակարգը ՉԺՀ սահմանների մոտ

Ամերիկացիները պատրաստվում են էապես ընդլայնել իրենց հակահրթիռային պաշտպանության համակարգը Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, հաղորդում է «Ուոլ Սթրիթ ջոռնալ» թերթը:

Պենտագոնը ֆինության է առնում Ճապոնիայի հյուսիսից հարավ եւ մինչեւ Ֆիլիպիններ ձգվող հակահրթիռային X-Band արդիական ռադարների շղթայի կառուցման հնարավորությունը: Այդ ռադարները միացված կլինեն արձակման հրթիռակայանքների եւ ռազմանավերի հետ, որոնք նույնպես համադրված են ռադարներով եւ կալանիչ հրթիռներով: Դրանք համատեղ պետք է կազմեն միասնական համակարգ, որը թույլ կտա հաջողությամբ կալանել բալիստիկ հրթիռները:

Նման համակարգի ստեղծման անհրաժեշտության մասին խոսող ամերիկացի պաշտոնական անձինք սովորաբար խոսում են ԿԺԴՀ-ից բխող հրթիռային սպառնալիքի մասին: Սակայն փորձագետները համակարծիք են, որ Պենտագոնը հետապնդում է եւս մեկ ռազմավարական նպատակ՝ զսպել Չինաստանին:

Ամերիկացի գեներալներին եւ ծովակալներին մտահոգում են չինական միջին հեռահարության բալիստիկ հրթիռները, որոնք կարող են բավական հեռվից մեծ ճշգրտությամբ խոցել ամերիկյան ռազմանավերը: Ներկայումս ՉԺՀ բանակն ունի 1000-1200 այդպիսի հրթիռ:

Հրթիռային հարձակման վաղ ծանուցման X-Band ռադարները տարածաշրջանում պետք է դառնան հակահրթիռային պաշտպանության համակարգի առանցքը: 2006 թվականից նման մի ռադար արդեն գործում է Ճապոնիայի հյուսիսում, մեկ ուրիշն էլ տեղադրված է ռազմանավի վրա, որը գրանցված է Փեռլ-Հարբորում, բայց հերթապահում է Չինաստանի եւ Կորեայի ափերի մոտ: ԱՄՆ-ը բանակցում է Ճապոնիայի հարավում երրորդ X-Band ռադարը կառուցելու նպատակով: Բացի դրանից, եւս մեկ ռադար կարող է հայտնվել Ֆիլիպիններում:

Ցանցը կարող է անչափ արագորեն ու ճշգրտորեն հետեւել Կորեական թերակղզում եւ Չինաստանի զգալի մասում հրթիռների հարձակումներին:

Պաշտոնական Պեկինը դեռ ուղղակիորեն չի մեկնաբանել ԱՄՆ-ի տարածաշրջանային նոր դիտավորությունները: Սակայն ՉԺՀ արտգործնախարարությունը օրերս հույս հայտնեց, թե ԱՄՆ-ը «ուշադրությամբ կվերաբերվի ընդհանուր կայունության եւ տարածաշրջային ռազմավարական զուգակշռության պահպանման խնդրին, չխախտելով բոլոր շահագրգիռ կողմերի ռազմավարական փոխվստահությունը»:

«Չեն թողնում հրեա կոչվել նույնիսկ գերեզմանում»

Այս մասին օգոստոսի 23-ի համարում գրել էր «Թարաֆը»: Խոսքը Ուրֆայի հրեաների մասին է, որոնցից էյուպ Բաղեմը գանգատվել էր թուրքական թերթին, որ Ուրֆայում հրեաների գերեզմանոց չլինելու պատճառով իր հարազատներին հողին է հանձնել մահմեդականների գերեզմանոցում: «Թարաֆի» վկայությամբ, Բաղեմը մեկ տարի շարունակ պայքարում է, որ հրեական գերեզմանոցի համար տարածք հատկացվի Ուրֆայում: Նա այդ հարցով նախ դիմել է վարչապետ Էրդողանին, ապա Ուրֆայի քաղաքապետին, որը Էրդողանի իշխող կուսակցությունից է: Դիմումին քաղաքապետարանը պատասխանել էր 2011-ի ապրիլի 8-ին, որտեղ մասնավորապես ասված է. «Հրեա քաղաքացիներին առանձին գերեզմանոց հատկացնելը գործող կանոնադրությամբ անհնար է»:

Հ. Չ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Տուապսեի շրջանում ջրհեղեղի վնասը՝ 1 մլրդ ռուբլի

Նախնական հաշվարկների համաձայն, Կրասնոդարի երկրամասի Տուապսեի շրջանում օգոստոսի լույս 22-ի գիշերը տեղի ունեցած ջրհեղեղի վնասը գնահատվում է 1 մլրդ ռուբլի: Այդ մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին հայտնել են Կրասնոդարի երկրամասի նահանգապետի մամլո ծառայությունում:

Տուապսեի շրջանի Նովոմիխայլովսկոյե առողջարանային ավանը հեղեղվել էր հորդառաս անձրեւների հետեւանքով: Հեղեղման պատճառներից մեկը Նեչեպսուխո գետի մակարդակի բարձրացումն էր 2,1-2,5 մետրով, ինչը ծովափին հայտնված պտտահողմի հետեւանքն էր: Տուժել են նաեւ Տենգինկա եւ Լերմոնտովո ավանները: Չորս զոհերից մեկը 22-ամյա մոսկվացի է, մյուսը՝ 44-ամյա պետերբուրգցի, երրորդը՝ 46-ամյա կրասնոդարցի, չորրորդն էլ՝ 84-ամյա տեղաբնակ է:

Երկրամասի վարչակազմի տվյալներով, տարերքի հետեւանքով տուժել է 1837 մարդ, վնասվել է 339 տուն: Վերականգնողական աշխատանքները կատարվում են օր ու գիշեր: Տուժածներին նախնական կարգով հատկացվում է 10.000 ռուբլի, իսկ տների վերականգնման համար՝ 150.000 ռուբլի:

Հունաստանում մտածում են կղզիներ վաճառելու մասին

Հունաստանի վարչապետ Անտոնիս Սամարասը հայտարարել է, որ կառավարությունը ծանրութեթեւ է անում մի քանի փոքր անմարդաբնակ կղզիներ վաճառքի հանելու հնարավորությունը, որպեսզի կրճատի բյուջեի պակասորդը եւ անհրաժեշտ միջոցներ հայթայթի բարեփոխումների անցկացման համար:

Անտոնիս Սամարասը ֆրանսիական «Le Monde» թերթին տված հարցազրույցում ասել է, որ եթե ազգային անվտանգության նկատառումները թույլ տան, ապա կարելի է «առեւտրայնորեն օգտագործել» երկրին պատկանող կղզիներից մի քանիսը: Հունաստանն ընդհանուր առմամբ ունի մոտ 6.000 կղզի: Դրանց մեծամասնությունը անմարդաբնակ է:

Վարչապետը պարզաբանել է, որ խոսքը չօգտագործվող տարածքը «արդարացի գնով» իրացնելու մասին է: Տեղական լրատվամիջոցների տվյալներով, կղզիների վաճառքի հնարավորությունը Հունաստանի կառավարությունում քննարկվում է 2010 թ.-ից:

Սամարասը ընդգծել է, որ երկրի տնտեսության վերելքի համար անհրաժեշտ է շատ կարգով լայնածավալ օտարերկրյա ներդրումներ կատարել:

Տարիներ առաջ առողջարանային համալիրի ստեղծման նպատակով հունական Պատրոկլա կղզին գնելու իսրայելցի գործարար Դավիթ Ապոլեի գործը աղմկալի կոռուպցիոն սկանդալ հարուցեց Իսրայելում: Դրանում ներքաշված էր մասնավորապես Արիել Շարոնը, որն այն ժամանակ նախարարի պաշտոնն էր զբաղեցնում: Մի քանի տարվա ձգձգումներից հետո գործը կարձվեց փաստերի անբավարարության պատճառով:

Բրեյվիկը դատապարտվեց 21 տարվա բանտարկության

Օսլոյի դատարանը երեկ 21 տարվա բանտարկության է դատապարտել ահաբեկիչ Անդերս Բրեյվիկին, որը 2011-ի հուլիսի 22-ին երկու ամենաարյունալի ահաբեկչություններն էր իրականացրել Նորվեգիայում: Այդ օրը Օսլոյում եւ Նորվեգիայի բանվորական կուսակցության երիտասարդական ճամբարում նրա գործողությունների հետեւանքով սպանվել էր 77 մարդ:

Դատական նիստի հենց սկզբում հայտարարվել է, որ Բրեյվիկը առողջ է եւ մեղսունակ: Այսպիսով, նրան կուղարկեն բանտ եւ ոչ թե՝ հոգեբուժարան: Անմեղսունակ ճանաչվելու դեպքում նա հավանաբար ամբողջ կյանքը կանցկացներ հոգեբուժարանում: Ինչ վերաբերում է 21 տարվա բանտարկությանը, դա առավելագույն ժամկետն է Նորվեգիայում:

90-էջանոց մեղադրական եզրակացության ընթերցումը ժամեր է տեւել: Դատական նիստի հենց սկզբում Բրեյվիկը ներկաներին ողջունել է բռունցքն առաջ պարզած: Լրատվամիջոցները դա անվանում են «նացիստական ողջույն»: Դատավճիռը լսելով՝ ահաբեկիչը գոհունակությամբ ժպտացել է: Ավելի վաղ նա քանիցս հայտարարել էր, որ իրեն հոգեպես առողջ է համարում եւ հատկորեն գիտակցում է սեփական գործողությունները, ուստի նախընտրում է պատիժը կրել բանտում: Դատական նիստի նախօրեին նա հայտարարել էր, որ եթե իրեն մեղսունակ ճանաչեն, ապա ինքը կհամաձայնի ամեն մի պատժաչափի:

«Ո՞ր է քայլում երաժշտությունը: Երաժշտությանը պետք չէ հետեւել: Այն ունի իր անձնական ուղին: Ուզենք թե չուզենք, ակամա գնում ենք նրա հետեւից: Եթե նույնիսկ փորձում ենք շեղվել, միեւնույն է, նորից վերադառնում ենք»:

Հայկ Մելիքյան

Հայ երիտասարդ կոմպոզիտորներ եւ կատարողներ շարքից

Հայկ Մելիքյան

Դաշնակահար, կոմպոզիտոր **Հայկ Մելիքյանը** համաշխարհային ճանաչում ձեռք բերած այն երաժիշտներից է, ով աչքի է ընկնում իր հազվագյուտ տաղանդով, վառ երեւակայությամբ, վիրտուոզ եւ ինքնատիպ կատարողականությամբ:

Նա ծնվել է 1980թ Երեւանում: Սովորել է Ալ.Հեքիմյանի անվան թիվ 13 երաժշտական դպրոցում (Իրինա Գրիշինիսկայայի դասարան), այնուհետեւ Ալ.Սպենդիարյանի անվան դպրոցում (Ալեքսանդր Գուրգենովի դասարան): 2002թ ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը՝ պրոֆ. Ալեքսանդր Գուրգենովի ղեկավարությամբ, իսկ 2005թ՝ նույն բաժնի ասպիրանտուրան (պրոֆ. Ա.Գուրգենովի դասարան): 2006-2009թթ սովորել է Երեւանի պետական կոնսերվատորիայի Կոմպոզիցիայի բաժնում (պրոֆ.՝ Վարդան Աճեմյանի դասարան):

Հայկ Մելիքյանը առավել հայտնի է որպես դաշնակահար. «Իմ առաքելությունը դաշնամուրային գործունեությունն է»: Նա հանրապետական եւ միջազգային մրցույթների դափնեկիր է: 2000 թվականից բազմաթիվ համերգներով հանդես է գալիս աշխարհի տարբեր երկրներում: Նրա նվագացանկը միշտ հագեցած է եւ բազմազան, որտեղ ժամանակակից երաժշտությունը գերակշռող մաս է կազմում: Մելիքյանը հայ եւ այլազգի շատ կոմպոզիտորների ստեղծագործությունների առաջին կատարողն է, որոնցից շատերը հատուկ գրվել են նրա համար: Նշենք, որ դաշնակահարը 2009թ հիմնել է «1900+» համերգաշարը՝ նվիրված 20-րդ դարի եւ ժամանակակից համաշխարհային դաշնամուրային երաժշտությանը, որի յուրաքանչյուր համերգ նվիրվում է մի ժողովրդի երաժշտությանը: Կայացել են ռուսական, ֆրանսիական, ճապոնական, լեհական, շվեյցարական եւ հայկական 20-րդ դարի եւ ժամանակակից դաշնամուրային երաժշտությանը նվիրված համերգներ, որոնց ընթացքում եղել են շատ գործերի պրեմիերաներ. «Առաջին կատարումները, որոնք իրականացվում են իմ կողմից, ինձ համար, եւ պարտավորեցնող են: Ներկայացնելով ստեղծագործությունը՝ ես փնտրում եմ կոմպոզիտորի անձնական երաժշտական լեզուն, տվյալ ժողովրդի կոմպոզիտորական դպրոցը: Նրանք ունեն տարբեր լեզուներ եւ ինձ համար հետաքրքրական է ուսումնասիրել դրանք»: Նշենք նաեւ, որ «1900+» համերգաշարի շրջանակներում, 2010 թվականին կայացավ երիտասարդ հայ կոմպոզիտորների մրցույթ, որի ժամանակ բազմաթիվ դաշնամուրային ստեղծագործություններից Մելիքյանն ընտրեց չորս կոմպոզիտորների գործեր: Նպատակն էր այդ ստեղծագործությունները կատարել, ձայնագրել, հրատարակել նոտային տեսքով, կատարել դրանց պրեմիերաները աշխարհի տարբեր երկրներում եւ թողարկել ձայնասկավառակ: Վերջինս, դաշնակահարի նշմամբ, լույս կտեսնի այս տարվա վերջում: Հ. Մելիքյանի

հետ կատարած չորս հայ կոմպոզիտորների սոնատների ձայնասկավառակը: Այն կամերային երաժշտությանը նվիրված Մելիքյանի առաջին ձայնասկավառակն է:

Իր վառ երեւակայության շնորհիվ Հայկ Մելիքյանը հանդես է գալիս որպես իմպրովիզացիայի փայլուն վարպետ, ինչը դաշնակահարի համերգները դարձնում է առավել հագեցած, բազմիմաստ եւ գունավոր: Երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր՝ **Աննա Արեւշատյանի** բնորոշմամբ. «Իր բոլոր համերգային ծրագրերը Հ. Մելիքյանն ավարտում է իմպրովիզացիաներով՝ դահլիճի կողմից առաջադրված թեմաների հիման վրա, ցուցաբերելով տարբեր դարաշրջանների, ոճերի փայլուն իմացություն, արտասովոր հնարամտություն, ճաշակ եւ հումոր, որը շատ հազվագյուտ շնորհ է»:

Դաշնակահարը շարունակում է ակտիվ համերգային գործունեություն ծավալել արտերկրում նաեւ այս տարի: 2012թ Ճապոնիայում Անգլիայի Էլիզաբեթ թագուհու հոբելյանական տարվա կապակցությամբ «Backes & Strauss»-ի կողմից թողարկված անգլիական ժամացույցի շնորհանդեսի համար Մելիքյանին առաջարկվել էր գրել երաժշտություն: Նաեւ ունեցել է մենահամերգ Տոկիոյի «Roppongi»-ի սրահում, որտեղ դաշնակահարն ընդգրկել էր անգլիացի, ճապոնացի եւ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, ինչպես նաեւ՝ իմպրովիզացիայի հատուկ համերգ, որտեղ իմպրովիզացրել էր անգլիական հանրահայտ թեմաներ: Այս ծրագիրը շարունակվում է աշխարհի տարբեր երկրներում: Այդ նպատակով առաջիկայում դաշնակահարը կմեկնի Մոնակո եւ Տորոնտո: Բացի դրանից Մելիքյանը հոկտեմբերին կմասնակցի Հռոմում կայանալիք «Nuovi Spazi Musicali» ժամանակակից երաժշտության փառատոնին, որտեղ կկատարի նաեւ հայ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Իսկ վերջերս նա փայլուն համերգով հանդես եկավ Ֆրանսիայում կայացած ամենամյա «Festival de Valmagne» փառատոնին ռուսական երաժշտության ծրագրով, որտեղ ներկայացրեց նաեւ Ի. Ստրավինսկու «Սրբազան գարուն» ստեղծագործությունը իր իսկ կողմից կատարված փոխադրմամբ: Ի դեպ այս փառատոնին դաշնակահարը մասնակցում էր երկրորդ անգամ:

Որպես կոմպոզիտոր Հ. Մելիքյանին բնորոշ է հետաքրքրական եւ ինքնատիպ մտածելակերպը: Գրել է սիմֆոնիկ, կամերային, խմբերգային, անսամբլային, վոկալ-գործիքային, սոլո դաշնամուրային ստեղծագործություններ, ինչպես նաեւ դաշնամուրային փոխադրումներ, համերգային պարաֆրազներ ու մշակումներ, որոնք պարբերաբար կատարվում են իր եւ աշխարհի շատ դաշնակահարների կողմից:

Կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը հետեւյալ խոսքերով է արտահայտվել Հ. Մելիքյանի մասին. «Դուք ասում եք գոյության տոնական զգացողություն, ասում եք ապրելու անխառն ուրախություն... Կարծում եմ սրանք եւ այս շարքի շքեղությունները Հ. Մելիքյանն առավել խորքով վայելում է այն պահերին, երբ դաշնամուրի առջեւ է, երբ նվագում է: Այս պահերին է, որ նա հավասարապես մերթ դաշնակահար է, մերթ կոմպոզիտոր: Ապրվող մնացյալ ժամերը նա նվիրում է այս պահերն առավել հասուն դարձնելուն, հնարավոր խորքով կայացնելուն: Ինչ կա ավելի հրաշալի, քան երբ մեկը ինքն է ստեղծում իր ուրախությունը՝ վայելելու համար այն եւ բաժանելու նրանց, ովքեր ունակ են այդ ուրախությունը իրենցը դարձնելու»:

Ինչպես հայ մեծ բանաստեղծ **Պարույր Սեւակն** է ասել. «Չլինել ժամանակից դուրս, բայց լինել ժամանակից վեր»: Դաշնակահար, կոմպոզիտոր Հայկ Մելիքյանն իր տաղանդով, աշխատասիրությամբ, խանդավառությամբ, սեփական գործի հանդեպ մեծագույն սիրով եւ ազգանվեր գործունեությամբ, կարելի է ասել, գտնվում է այդ ուղու վրա՝ «լինել ժամանակից վեր»»:

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ

Երաժշտագետ, կոմպոզիտոր

Մեկնարկում են Ղազախստանի կինոյի օրերը

Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանատան, ինչպես նաեւ Ղազախֆիլմը եւ Հայաստանի ազգային կինոկենտրոնը՝ ՀՀ-ում ԲՏԱ բանկի աջակցությամբ օգոստոսի 27-31-ը Երեւանում անցկացվելու է Ղազախստանի կինոյի օրեր, որը տեղի է ունենալու Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ 20-ամյա դիվանագիտական հարաբերությունների հաստատման տոնակատարությունների շրջանակներում:

Հայ հանդիսականին կներկայացվեն ղազախ ռեժիսորների հինգ լավագույն ֆիլմերը, որոնք ցուցադրվելու են անվճար՝ Մոսկվա կինոթատրոնում, ժամը 19:00-ին ռուսերեն լեզվով:

Փառատոնի բացումը տեղի կունենա օգոստոսի 27-ին, ժամը 18:00-ին ՀՀ Ղազախստանի դեսպան Այիմդոս Բոզժիգիտովի, ինչպես նաեւ Ղազախֆիլմի եւ Հայաստանի Ազգային կինոկենտրոնի ներկայացուցիչների մասնակցությամբ: Նշենք, որ բացման արարողության ընթացքում կցուցադրվի «Քոչվորները» ֆիլմը, ինչն հիմնված է իրական պատմական փաստերի վրա , որոնք տեղի են ունեցել 18-րդ դարում Աբիլայ Խանի ժամանակ:

Ֆիլմը նկարահանված է Իլյա Եսենբերլինի ստեղծագործության հիման վրա:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Հայաստանի եւ Իսրայելի միջեւ ստորագրվեց համագործակցության ծրագիր

1994 թվականի դեկտեմբերի 19-ին Երուսաղեմում ստորագրվել է «Իսրայելի պետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ մշակույթի, կրթության եւ գիտության ոլորտներում» համագործակցության համաձայնագիր, որի հիման վրա երեկ մշակույթի նախարարությունում ստորագրվեց «ՀՀ կառավարության եւ Իսրայելի կառավարության միջեւ 2012-2014 թթ. համար կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում համագործակցության մասին» փաստաթուղթը, ինչպես նաեւ ՀՀ մշակույթի նախարարության եւ Իսրայելի սփյուռքի եւ տեղեկատվության նախարարությունների միջեւ 2013-2015 թթ. համագործակցության աշխատանքային ծրագրեր՝ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի եւ Իսրայելի սփյուռքի եւ տեղեկատվության նախարար Յուլի Իոել Էդելշտեյնի կողմից: ՀՀ մշակույթի նախարարը իր հերթին ասաց, որ այս պայմանագիրը հնարավորություն կտա Հայաստանում եւ Իսրայելում անցկացնել փոխադարձ մշակույթի օրեր, ինչպես նաեւ արվեստի տարբեր ոլորտներում մասնագետների, մանկական եւ երտասարդական խմբերի փոխայցեր»:

Հավելենք, որ երեկ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի ունեցավ պետական աջակցությամբ հրատարակված «Հրեական համայնքը Հայաստանում» գրքի շնորհանդեսը, ինչպես նաեւ համերգ՝ նվիրված Հայաստանի հրեական համայնքի 20-ամյակին:

Մ. Հ

Մինասի որմնանկարի վերականգնումը՝ վտանգվա՞ծ

Գյումրու Ժուռնալիստների «Աստղարեզ» ակումբը ստացել ու հրապարակել է «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի նախագահ Արման Ավետիսյանի՝ Շիրակի փոխմարզպետ Սեյրան Պետրոսյանին ուղղված նամակի պատճենը, այն մասին, որ Գյումրու քաղաքապետարանը չի կատարում Մինասի մի որմնանկարի վերականգնման համար հիմնադրամի հետ կնքված պայմանագրային պարտավորությունների մի մասը եւ այդ պատճառով որմնանկարի փրկությունը վտանգված է: Ըստ ակումբի երեկ տարածած հաղորդագրության, խոսքը վերաբերում է նկարչի «Հայկական հովվերգություն» մեծածավալ որմնանկարին:

Ինչպես նշվում է, քաղաքապետարանը վերականգնող կազմակերպությանը վճարելու պարտավորությունից բացի ստանձնել էր մի շարք աշխատանքների (շինարարական նախապատրաստական աշխատանք, ջրամատակարարում, կապի ու համացանցի տրամադրում, բեռնափոխադրում եւ բարձում, տրանսպորտի, լուսանկարչական, նյութերի եւ պարագաների, Երեւանում իտալացի եւ հայ վերականգնողների կեցության ծախսեր եւ այլն) կատարման պարտավորություն, որոնք չի կատարում կամ թերի է կատարել: Ըստ նամակի, ընդհանուր առմամբ հիմնադրամը քաղաքապետարանի փոխարեն նախահաշվից դուրս կատարել եւ կարող է կատարել մոտ 13 մլն դրամի աշխատանք: Բացի այդ, հիմնադրամի նախագահի հաղորդմամբ, քաղաքապետարանը նախահաշվում հիմնադրամին վերապահված ժամանակացույցով նախատեսվածից պակաս է վճարել եւս 13 մլն դրամ:

«Այսպիսով, ազգային արժեք ներկայացնող որմնանկարի վերականգնումը, որն ամբողջությամբ անջատված է պատից եւ փռված է գետնին, ունի կոնկրետ տեխնոլոգիական պրոցեսի ժամկետ, եւ ժամկետի խախտումը կհանգեցնի հուշարձանի կորստի, ուստի հիմնադրամը խնդրում է Ձեր միջնորդությունը ՀՀ կառավարությանը՝ անհապաղ լուծում տալու վերը նշված խնդրին», ասվում է նամակում:

Գ. Մ.

Արթուր Աբրահամը կփորձի իրեն վերադարձնել աշխարհի չեմպիոնի տիտղոսը

Բումեյֆերները հավատում են Արթուրի հաջողությանը

Այսօր Բեռլինի «02 World» մարզասրահում տեղի կունենա որոֆեսիոնալ բռնցքամարտի երկար սպասված մենամարտը Արթուր Աբրահամի եւ 2-րդ միջինֆաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռոբերտ Շտիգլիցի միջեւ: Մենամարտն ուղիղ եթերում կցուցադրեն գերմանական ARD հեռուստաընկերությունն ու Հայաստանի Հանրային հեռուստատեսությունը:

32-ամյա Արթուր Աբրահամը որոշ ընդմիջումից հետո կրկին իրավունք է ստացել վիճարկելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ժամանակին հայ բռնցքամարտիկին էր պատկանում միջինֆաշային կարգում IBF-ի վարկածով չեմպիոնական գոտին: Սակայն Արթուրը որոշեց տեղափոխվել ֆաշային հաջորդ կարգ, որտեղի մասնակցի Super Six մրցաշարին: Ուստի նա ստիպված էր հրաժարվել միջինֆաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսից:

Ինչպես հայտնի է, Արթուրի համար հաջող չդասավորվեցին մենամարտերը Super Six մրցաշարում: Մինչ այդ անպարտելի Աբրահամը ռինգում 3 անգամ զիջեց մրցակիցներին: Անդրե Դիրելի հետ 2010-ի մարտի 27-ին անցկացված մենամարտում Արթուրը մրցավարի հրահանգներից հետո մրցակցին հարվածելու համար որակազրկվեց ու նրան պարտություն գրանցվեց: Դա Աբրահամի առաջին պարտությունն էր որոֆեսիոնալ ռինգում: Այնուհետեւ հետեւեցին պարտությունները Կառլ Ֆրոչից ու Անդրե Ուարդից:

Այդ անհաջողություններից հետո Արթուրը որոշեց աստիճանաբար նվազեցնել քաշը, որպեսզի վերադառնա միջինֆաշային կարգ: Այդ նպատակով հայ բռնցքամարտիկն այս տարի 2 մենամարտ անցկացրեց, որոնք ցույց տվեցին, որ Արթուր Աբրահամը կրկին լավ մարզավիճակ է ձեռք բերում, փոխել է մարտավարությունն ու ավելի ագրեսիվ է գործում ռինգում հենց առաջին ռաունդներից: Հունվարի 14-ին Արթուրը 5-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց Օսկար Ֆարհասին՝ նվաճելով WBO-ի վարկածով Եվրոպայի չեմպիոնի թափուր տիտղոսը: Իսկ մարտի 31-ին Աբրահամը 12-ռաունդանոց մենամարտում միավորներով պարտության մատնելով լեհ Պյոտր Վիլչեւսկուն, պահպանեց Եվրոպայի չեմպիոնի իր տիտղոսը:

Արթուր Աբրահամը լրջորեն է նախապատրաստվել այսօրվա մենամարտին ու վստահ է իր ուժերին: Նրա լավ մարզավիճակի մասին է խոսել Արթուրի ակումբակից Դոմինիկ Բրիչը, որը մարզումների ժամանակ մենամարտեր է անցկացրել Աբրահամի հետ:

«Արթուրը հիանալի բռնցքամարտիկ է նաեւ մարզվելու համար: Մենք շատ լավ աշխատեցինք միմյանց հետ: Արթուրը շատ մենամարտեր է ավարտել նոկաուտով: Նա տիրապետում է հուժկու հարվածների, որը մարզումների ժամանակ ցնցում է նույնիսկ սաղավարտ կրող բռնցքամարտիկին: Եթե այդպիսի մի հարված դիպչի Շտիգլիցին, ապա մենամարտը կարող է ժամկետից շուտ ավարտվել: Շնորհիվ արագության եւ դիմացկունության, մարզումների ժամանակ առանձնակի դժվարությունների չհանդիպեցի: Քանի որ ես էլ շատ արագ հարվածներ էի հասցնում, Արթուրը մարզումների ժամանակ իր դիմացկունությունն էր փորձում:

Երկու բռնցքամարտիկներն էլ ուժեղ են, որոնք մի շարք հիանալի մենամարտեր են անցկացրել: Կարծում եմ, որ հավասար մենամարտ կլինի: Սակայն ծանոթ լինելով Արթուրին, կարծում եմ, որ նա կկարողանա նոկաուտի ենթարկել Շտիգլիցին: Այնպես որ Արթուրի հաղթելու հնարավորությունները բարձր եմ գնահատում: Հուսով եմ, որ նա կհաղթի, երկրպագելու եմ նրան», նշել է Դոմինիկ Բրիչը:

Արթուր Աբրահամի հաջողությանը հավատում են նաեւ բուֆմեյֆերները: Արթուրի հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 1.36 գործակցով, իսկ Շտիգլիցի հաղթանակի գործակիցը 3,25 է: Ոչ-ոքին գնահատվում է 23 գործակցով: Միավորներով հաղթելու դեպքում Աբրահամի հաջողության գործակիցը 2,35 է, Շտիգլիցինը՝ 4,3:

Առաջին ռաունդում հաղթելու դեպքում խաղադրույք կատարածները 20 անգամ ավելի մեծ գումար կվաստակեն: Եթե Արթուրը հաղթի 2-7-րդ ռաունդներում, գործակիցը 15 է: 8-10-րդ ռաունդների գործակիցը 13 է, 11-րդինը՝ 15, 12-րդինը՝ 20:

32-ամյա Արթուր Աբրահամը 37 մենամարտերից 34-ում հաղթել է, 3-ում պարտվել: Ռոբերտ Շտիգլիցը ծնունդով ռուսաստանցի է, ներկայումս մարզվում ու բնակվում է Գերմանիայում: Նա անցկացրած 44 մենամարտերից 42-ն ավարտել է իր օգտին, 2-ում պարտվել է:

Հայկ Մարտիրոսյանը չեմպիոնի տիտղոսի գլխավոր հավակնորդն է

Պրահայում ընթացող շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունում իր վստահ ելույթներով հիացնում է Հայկ Մարտիրոսյանը: Պատանի շախմատիստն առայժմ միավորի ոչ մի կորուստ չի ունեցել եւ վստահորեն ընթանում է դեպի նպատակակետը: 7-րդ տուրում նա հերթական հաղթանակը տոնեց իր գլխավոր մրցակիցներից մեկի՝ Կասպեր Գրելայի նկատմամբ: Այժմ Հայկը մինչեւ 12 տարեկանների մրցաշարում մեկ միավորով է գերազանցում իրեն 6-ական միավորով հետապնդող Երգուս Պեչակին եւ Դանիլա Բիլանին: Հենց Երգուսն էլ կլինի Մարտիրոսյանի մրցակիցը 8-րդ տուրում: Առաջ Հակոբյանը վաստակել է 5,5 միավոր: Նա հաղթեց Վիկտոր Գազիկին եւ պահպանում է մրցանակակիր դառնալու հնարավորություն:

Մրցանակային տեղի հավակնորդներ են նաեւ Շանթ Սարգսյանն ու Հովհաննես Գաբուզյանը, որոնք ունեն 6-ական միավոր: Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում հանդես եկող Շանթը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Սեմյոն Լոմասովին: Հայ շախմատիստը մեկ միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Անդրեյ Եսիպենկոյին, որը 7-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց:

Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում էլ առանց պարտության ընթացող Հովհաննես Գաբուզյանը հաղթեց Դավիթ Անտոնին: Հայ շախմատիստը Վադիմ Միսսենկոյի հետ 6 միավորով գլխավորեց աղյուսակը:

Առաջնության պարգեւներին տիրելու հնարավորություններ են պահպանում նաեւ Տիգրան Հարությունյանը (մինչեւ 16 տարեկաններ) եւ Մանուել Պետրոսյանը (մինչեւ 14 տ.), որոնք վաստակել են 5,5-ական միավոր: Մանուելը հաշտություն կնքեց Կիրիլ Կոզիտոնովի հետ: Նա 8 շախմատիստների հետ հետապնդում է աղյուսակը 7 միավորով գլխավորող լեհ Յան-Կրժիժտոֆ Դուդային: Տիգրան Հարությունյանը հաղթելով Գարի Գիրոյանին, ընթանում է 5-րդ տեղում: Աղյուսակը 7 միավորով գլխավորում է Իսրայելը ներկայացնող Ավիթալ Բորուչովսկին, որին 6-ական միավորով հետապնդում են լեհ Կասպեր Դրոզդովսկին ու բելառուս Ռոման Գրիբը:

Մինչեւ 18 տարեկան աղջիկների մրցաշարում հանդես եկող Մարիա Գեւորգյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց ու զգալիորեն նվազեցրեց մրցանակային տեղ զբաղեցնելու իր հնարավորությունները: Մարիան զիջեց Անաստասիա Ռահմանգուլովային ու 4,5 միավորով նահանջեց 11-րդ հորիզոնական: 5,5-ական միավորով առաջատարներն են Ալեքսանդրա Գորյաչկինան, Ամալիա Արանազը, Տատյանա Խլիչկովան եւ Սիսա Իմեեւան:

Մինչեւ 10 տարեկան աղջիկների մրցաշարում հաջող է խաղում Կարինե Բեգլարյանը, որը վաստակել է 4,5 միավոր: Նա հաշտություն կնքեց Եկատերինա Գոլցեւայի հետ: Այս մրցաշարում 6-ական միավորով աղյուսակը գլխավորում են Անաստասիա Զոտովան, Նադիա Շղանկոն եւ Անդրեա Լենգուելը: Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր:

ՇԱԽՄԱՏ

Արոնյանն ու Դանիելյանը կմասնակցեն ինտելեկտուալ խաղերին

ՖԻԴԵ-ն որոշել է այս տարի համաշխարհային ինտելեկտուալ խաղերն անցկացնել Պեկինում դեկտեմբերի 12-20-ը: 16-ական ուժեղագույն շախմատիստներն ու շախմատիստուհիներն իրենց հարաբերությունները կպարզեն արագ, «կույր» շախմատում եւ կայծակնային խաղում: Յուրաքանչյուր մրցաձեւի համար հատկացված է 2-ական օր:

Այդ խաղերում Հայաստանը կներկայացնեն Լեւոն Արոնյանն ու Էլինա Դանիելյանը: Արոնյանի մրցակիցները կլինեն Թեյմուր Ռաջաբովը, Սերգեյ Կարյակինը, Հիկարու Նակամուրան, Ալեքսանդր Մորոզեւիչը, Վասիլի Իվանչուկը, Ալեքսանդր Գրիչուկը, Վեսելին Թոփալովը, Գատա Կամսկին, Պետեր Լեկոն, Վիտալի Բոլոգանը, Բայադուր Զոբաւան, Շահրիյար Մամեդյարովը, Վան Հաոն, Անիշ Գիրին եւ Դին Լիրենը:

Էլինա Դանիելյանը մրցավեճի կբռնվի աշխարհի ներկայիս չեմպիոն Հոու Յիֆանի, Աննա Մուզիչուկի, Համպի Կոներուի, Ջժաո Սյուեի, Եկատերինա Լահնոյի, Վիկտորիա Չմիլիտեի, Աննա Զատոնսկիխի, Անտուանետա Ստեֆանովայի, Բելա Խոթենաշվիլու, Հարիկա Դրոնավալիի, Էլիզաբեթ Պյոտչի, Ջժու Ջենի, Պիա Կրամլինգի, Մոնիկա Սոչկոյի եւ Ալեքսանդր Կոստենյուկի հետ:

Լենս Արմսթրոնգը կզրկվի տիտղոսներից

Ամերիկացի հանրահայտ հեծանվորդ Լենս Արմսթրոնգը ցմահ կորակազրկվի եւ կզրկվի «Տուր դը Ֆրանս» բազմօրյա հեծանվավազքի հաղթողի իր 7 տիտղոսներից: Նրան ԱՄՆ-ի հակադոպինգային գործակալությունը մեղադրում է դոպինգի օգտագործման մեջ: Այդ մեղադրանքը հեծանվորդին ներկայացվել է այս տարվա հունիսին՝ հիմք ընդունելով 2009-ի եւ 2010-ի դոպինգ ստուգման արդյունքները: Արմսթրոնգը մեղադրվում է ոչ միայն արգելված խթանիչների օգտագործման, այլեւ դրանց տարածման եւ մյուս մարզիկներին դոպինգ ընդունելու դրդման մեջ:

Արմսթրոնգը սկզբում հերքում էր իրեն հասցեագրված մեղադրանքը եւ որոշել էր պատիվը պաշտպանել դատարանում: Սակայն հեծանվորդի գործով վճիռը հետաձգվել էր, որի արդյունքում Արմսթրոնգը որոշեց դադարեցնել պայքարը:

«Յուրաքանչյուրի կյանքում գալիս է մի պահ, երբ հարկավոր է ասել՝ բավական է: Ինձ համար այդ պահը եկել է: Իմ նկատմամբ հետաքննությունը «վիուկների որս» եմ համարում: Նրանք գտնում են, որ հեծանվավազքում իմ առավելությունը մրցակիցների նկատմամբ անարդարացի էր, դոպինգի շնորհիվ եմ 7 տարի անընդմեջ հաղթող ճանաչվել: Արդեն հոգնել եմ նման անհեթեթությունների դեմ պայքարելուց», հայտարարել է Լենս Արմսթրոնգը:

Ճիշտ է, Արմսթրոնգը կարող է ԱՄՆ-ի հակադոպինգային գործակալության որոշումը վիճարկել Լոզանի մարզական իրավարար դատարանում: Բացի այդ էլ, առայժմ հայտնի չէ հեծանվավազքի միջազգային միության տեսակետը: Սակայն Արմսթրոնգն այլեւս չի ցանկանում պայքարել:

2011-ին մարզական կարիերան ավարտած ամերիկացի հեծանվորդը բացի «Տուր դը Ֆրանսում» հաղթելուց, Սիդնեյի ամառային օլիմպիադայի եւ աշխարհի առաջնության բրոնզե մրցանակակիր է: Նա նաեւ հաղթող է ճանաչվել մի շարք մրցաշարերում:

1996-ին Արմսթրոնգի մոտ քաղցկեղ հայտնաբերվեց: Բժիշկների հավաստմամբ, նրա ապրելու հավանականությունն ընդամենը 20 տոկոս էր: Սակայն Արմսթրոնգը ոչ միայն պայքարեց մահացու հիվանդության դեմ, այլեւ որոֆեսիոնալ սպորտում մեծ նվաճումների հասավ: Նա ծանր հիվանդների օգնության հիմնադրամ է ստեղծել:

Զորջ Սորոսը գնել է «Մանչեսթր Յունայթեդի» բաժնետոմսերի 8 տոկոսը

Ամերիկացի միլիարդատեր Զորջ Սորոսը Նյու Յորքի ֆոնդային բորսայից գնել է «Մանչեսթր Յունայթեդի» 3,1 մլն բաժնետոմս, որը կազմում է ընդհանուր բաժնետոմսերի 7,85 տոկոսը:

Ընդհանուր առմամբ ֆոնդային բորսայում վաճառված բաժնետոմսերից անգլիական ակումբը 233 մլն դոլար է ստացել: Փորձագետներից շատերը գործարքն անհաջող են համարում, քանի որ բաժնետոմսերը նախատեսված 16-20 դոլարի փոխարեն վաճառվել են հատը 14 դոլարով: Ստացված գումարը «Մանչեսթր Յունայթեդն» օգտագործելու է ակումբի պարտքերը մարելու համար:

«Զենիթը» հետաքրքրվում է Նանիով

«Մանչեսթր Յունայթեդը» դեմ չէ վաճառելու Նանիին: Վերջինս 2007-ից անգլիական ակումբի խաղացող է համարվում: Ակումբի ղեկավարությունը պատրաստ էր պորտուգալացի կիսապաշտպանի հետ 4 տարով երկարաձգելու պայմանագրի ժամկետը, սակայն Նանին պահանջում է շաբաթական աշխատավարձը բարձրացնել 40 հազար ֆունտ ստեռլինգով: Ներկայումս նա շաբաթական 90 հազար ֆունտ ստեռլինգ է ստանում:

Ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը 37 մլն ֆունտ ստեռլինգ է, իսկ Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» նրա դիմաց 25 մլն ֆունտ ստեռլինգ է առաջարկում:

10 մլն եվրո Արշավինի համար

Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» 10 մլն եվրո է առաջարկել «Արսենալին» Արշավինի տրանսֆերի համար: 32-ամյա ֆուտբոլիստը «Զենիթում» հանդես է եկել 1999-2008-ին: Այս տարվա փետրվարից մինչեւ մայիս Արշավինը վարձավճարով խաղաց «Զենիթում»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրյա հեռֆերով**

Իլհամ Ալիեւը հիվա՞նդ է

1-ին էջից

Օլիմպիական խաղերից այնքան էլ երկար ժամանակ չի անցել: Եվ ահա Իլհամ Ալիեւը Թուրքախոս երկրների համագործակցության խորհրդի գագաթաժողովին, որ տեղի ունեցավ Բիշքեկում, չներկայացավ: Մենք արդեն գրել ենք, որ գուցե քաղաքական զգուշավորության պատճառով է, որ Ադրբեջանը ներկայացվել է վարչապետի մակարդակով: Երեկ, սակայն, Ադրբեջանի ԱԳՆ-ն «լեզու ծամծմելու» պես է անդրադարձել Իլհամ Ալիեւի՝ Թեհրան մեկնելու եւ չմիացած երկրների գագաթաժողովին մասնակցելու հավանականությանը: Տպավորությունն այն է, որ «նորին գերազանցությունը» բաց կթողնի նաեւ այդ գագաթաժողովը:

Նման ենթադրության է մղում «տանու» քաղաքագետներից մեկի «սպառիչ բացատրությունը», թե «նախագահը Թեհրան չի մեկնի, քանի որ այդ երկրում աթոռիանաբար դատում են ադրբեջանցի երկու երիտասարդ բանաստեղծների», ինչին քաղաքագետ **Փարվին Դարաբադին զգուշորեն հակադարձել է. «Երկու երկրների (Իրանի եւ Ադրբեջանի- Վ. Ա.) հարաբերություններն այն աստիճանի սրված չեն, որպեսզի նախագահի Թեհրան չմեկնելը դրանով բացատրվի, գուցե կան տեխնիկական կամ այլ պատճառներ»:**

Մենք նայեցինք Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքէջը (տես www.president.az/ եւ պարզեցինք, որ վերջին թարմացումն արվել է օգոստոսի 17-ին: Այդ օրն Իլհամ Ալիեւը ընդունել է Ադրբեջանում իր առաքելությունն ավարտած՝ Եգիպտոսի դեսպանին: Մեկ շաբաթից ավելի ժամանակ է անցել, սակայն «նորին գերազանցության» աշխատանքային գործունեության վերաբերյալ նրա իսկ կայքէջը որեւէ թարմացում չունի: Այս ֆոնի վրա ի՞նչ է նշանակում Դարաբադիի ակնարկը Թեհրան չմեկնելու «տեխնիկական կամ այլ պատճառների» մասին:

Ի՞նչ «տեխնիկական խնդիրներ» կարող է ունենալ Ադրբեջանի նախագահը, որպեսզի Թեհրան չմեկնի: Նրա ինքնաթիռը սարքի՞ն չէ, թե՞ իր նստավայրից մինչեւ օդանավակայան ճանապարհն է անբարեկարգ: Գուցե ընդունող կողմը «նորին գերազանցությանը» պատշաճող կեցավայր չի՞ հատկացրել: Բոլոր հարցերի պատասխանը բացասական է: Մնում է ընդունել, որ Իլհամ Ալիեւը Թեհրան մեկնելու հարցում «այլ պատճառներով» չի կողմնորոշվում:

«Այլը» կարող է քաղաքական լինել: Միացյալ Նահանգներն, ինչպես հայտնի է, Թեհրանի գագաթաժողովը, մեղմ ասած, «չի ողջունում»: Բայց Թեհրանում կգտնվի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան կի Մունը, հանգամանք, որ գագաթաժողովին տալիս է կոնսենսուսային երանգ: Ուստի Իլհամ Ալիեւի, որպես ՄԱԿ-ի ԱԽ ոչ մշտական անդամ երկրի նախագահի, ներկայությունը գագաթաժողովին կդիտվեր օրինաչափ: Մանավանդ որ Իրանը եւ Ադրբեջանը հարեւան երկրներ են: Դա առիթ կդառնար, որ Բաքու-Թեհրան հարաբերությունների լարվածությունը որոշակիորեն մեղմվեր: Եվ եթե Իլհամ Ալիեւը, այս եւ այլ հանգամանքների նկատառմամբ հանդերձ, չմասնակցի Թեհրանի գագաթաժողովին, ուրեմն կամ գնում է «վա բանկ» եւ վերջնականապես «զրոյացնում» Իրանի հետ հարաբերությունները, կամ նա պարզապես այս օրերին անգործունակ է եւ ֆիզիկապես չի կարողանում տեղաշարժվել:

Վ. Ա

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է մրցույթ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար

1. Հատուկ մանկավարժության եւ հոգեբանության ամբիոն

Ամբիոնի վարիչի պաշտոնին, ըստ տարակարգի, կարող են հավակնել մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող եւ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք:

2. Լոգոպեդիայի եւ վերականգնողական թերապիայի ամբիոն

Ամբիոնի վարիչի պաշտոնին, ըստ տարակարգի, կարող են հավակնել մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող եւ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք, մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող եւ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք:

Ծանոթություն.

Հավակնորդները համալսարանի գիտական քարտուղարին են ներկայացնում.

▼ դիմում ռեկտորին
▼ կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
▼ քաղվածք աշխատանքային գրքույկից,
▼ համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,
▼ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
▼ գիտական աստիճանը եւ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
▼ տպագրված գիտական եւ մեթոդական աշխատանքների ցուցակը,
▼ տվյալներ պարգեւների, մրցանակների եւ պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր, սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի գիտական քարտուղարին:

Հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 17 , հեռ. 59 70 28:

ՌԵԿՏՈՐԱՏ

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**
▼ **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

Հավելված 1
ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի
« » օգոստոսի, 2012թ. թիվ 05 -Լ հրամանի
Ա.Գ.Միրզոյան

ԲԱԺ ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչի թափուր պաշտոնի համար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչի թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթի մասին

Պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում ձեռք բերած, որի ճանաչումը ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության 60 տարին չլրացած այն քաղաքացին, ով՝

ա) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ պահեստազորի սպա է,

բ) տիրապետում է գրական հայերենին:

2. Ջուրի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշմամբ հաստատված ցանկով հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատներն եւ հիվանդությունները:

3. Հատուկ քննչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել նաև 1-ին մասի «ա» ենթակետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչեւ 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված անձինք:

4. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

ա) մինչև նշանակումը չունի դատախազի կամ քննիչի առնվազն 3 տարվա ստաժ,

բ) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

դ) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,

ե) գտնվում է քրեական հետապնդման մեջ,

զ) չի համապատասխանում 1-ին կետով սահմանված պահանջ նե րին:

5. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչի թափուր պաշտոնը համալրելու համար ներկայացվող փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին.

բ) անձը հաստատող փաստաթուղթ և պատճենը,

գ) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ և պատճենը,

դ) աշխատանքային գրքույկ և պատճենը կամ քաղվածք,

ե) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ և պատճենը (եթե հավակնորդը արական սեռի է),

զ) Տեղեկանք՝ քննիչի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշման,

է) հայտարարություն՝ դատապարտված կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելու մասին,

ը) երկու լուսանկար՝ 3x4 չափսի

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Մրցույթն անցկացվում է հարցազրույցի եղանակով, որն իրականացվում է հատուկ քննչական ծառայության պետի կողմից հաստատված՝ ծառայության ծառայողների ատեստավորման ծրագիր-հարցաշարի հիման վրա /www.investigatory.am/:

Մրցույթն անցկացվելու է 2012թ. հոկտեմբերի 4-ին՝ ժամը 11:00-ին,

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ է համարվում 2012թ. սեպտեմբերի 24-ը:

ՀՀ գլխավոր դատախազության շենքում՝ /Վ.Սարգսյան 5/,

ՀՀ հատուկ քննչական ծառայություն (5-րդ հարկ):

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի անձնակազմի բաժինը /հեռ. 511-684, 511-662 /:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 21-ի թիվ-1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՊԵԿ ՊԸԾՁԲ-6

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ՀՀ ք. Երեւան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում, որն անցկացվելու է մեկ փուլով:

Պարզեցված ընթացակարգով գնման հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Ահարոնյան 12/3 հասցեի վարչական շենքի դահլիճի էլեկտրաստեղծիկական սարքավորումների տեղադրման, մոնտաժման եւ կարգաբերման ծառայությունների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Ահարոնյան 12/3 հասցեի վարչական շենքի դահլիճի էլեկտրաստեղծիկական սարքավորումների տեղադրման, մոնտաժման եւ կարգաբերման ծառայությունների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի գործողությունները եւ որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գնումների աջակցման կենտրոն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ք. Երեւան, Մ.Խորենացու-7 հասցեով, գնումների եւ շինարարության բաժին, մինչեւ սույն թվականի սեպտեմբերի 1-ը, ժամը՝ 12:00-ը, դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Հայտերը բացվում են հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Պարզեցված ընթացակարգի հաղթողը կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներակայացրած մասնակցի հայտը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

ՕՐԱԿԱՐԳ

Ս.թ. օգոստոսի 29-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստ:

Օրակարգում՝

«Էկաս» ՍՊԸ (ՇԽ-163 լիցենզիա) կողմից ներկայացված շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգի փոփոխությանը համաձայնություն տալու հարցի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՕՐԱԿԱՐԳ

Ս.թ. օգոստոսի 31-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստ

▼ «Սաքրազ Գրուպ» ՍՊԸ (ԽՏ-060 լիցենզիա) կողմից ներկայացված խաղատան շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին համաձայնություն տալու հարցի քննարկում:

▼ «Ինտեր լոտո» ՍՊԸ (ՎԽ-019 լիցենզիա) կողմից ներկայացված վիճակախաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին համաձայնություն տալու հարցի քննարկում:

▼ Կայսր-Տավր» ՍՊԸ (ՇԽ-041 լիցենզիա), «Ֆրաք փլեյ» ՍՊԸ (ՇԽ-170 լիցենզիա), «Հայկ և Մայիս» ՍՊԸ (ՇԽ-241 լիցենզիա), «Սենսատ կազինո» ՍՊԸ (ԽՏ-043 լիցենզիա), «Հին ու Նոր Զվարթնոց» ՍՊԸ (ՇԽ-209 լիցենզիա), «Արս եւ Ին» ՍՊԸ (ՇԽ-176 լիցենզիա) եւ «Վիգ-Հար» ՍՊԸ (ՇԽ-242 լիցենզիա) նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցերի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԳՈՎԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 24.8.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: